



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. Տարի - ՅՈՒՆՈՒԱՐ 1936



12^{me} Année - Janvier 1936



Փրանսաճայ Աւերա. Եկեղեցին կը հաւատայ

Խմբագրական

Քրիստոսը ճանչնաւ

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

«Զիս կը սիրե՞ս»

Բարձրագոյն տենչ»

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Վեր. Ա. Չ. Եղոյեան

Սամուէլ Պ.

Դաղեց Չ. Բ. Պուտաքեան

Շնորհաց ծովէն

«Զենք կրնար չխօսիլ»

Սրբուհի Պէլէրեան

Կենաց ածուսերէն

«Ով որ ազանջ ունի թող լսէ»

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչութիւններ

Վ. Ս.

Մանկանց սիւնակ

1936

1935

Յ. Ք.

Ս. Պ.

Կենդանի հացն ու կենաց ջուրը



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ Թէեւ Գրանտահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենոն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բանտին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանաւանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերներ երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողբէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ ուսարկը յովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մի անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ յոլոր Թուրքերէն յոգուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յոգուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերտին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՃՆԵԴԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յոգուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ խիստ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար ղեր Compte Chèque Postal և H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արեւնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն,
բէն, ու Քրիստոս
քեզի լըս պիտի
տայ:
Երեւ. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՈՒԱՐ 1936

ԹԻԻ 4

ՖԻՐԱՆՍԱՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՀԱՒԱՏԱՅ

Ա.— ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ

ա. Հայր Աստուծոյ, որ է Ազրիւր սիրոյ, Ամենակալ Արարիչ եւ Տէր երկնից եւ երկրի եւ համայն ստեղծուածոց:

բ. Որդին Աստուծոյ, որ է ի յաւիտենից գոյակից Աստուծոյ եւ հաւասար Անոր, Բանն Աստուծոյ. կենաց Իշխան, առանց որուն բան մը չեղաւ եւ ինչ որ եղաւ Անով եղաւ:

գ. Սուրբ Հոգի Աստուծոյ, որ կը կոչուի Աստուծոյ Հոգին, Յիսուս Քրիստոսի Հոգին, կենաց, Շնորհաց, Փառաց եւ Յաւիտենական Հոգին, որ կը յանդիմանէ աշխարհը մեղքի համար, որ նոր կեանք կուտայ յանցանաց եւ մեղաց մէջ մեռածներուն եւ իբր Մխիթարիչ կը մեծցնէ զանոնք սրբութեան մէջ Աստուծոյ գովեստին եւ փառքին համար:

Բ.— ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ա. Աստուծոյ Միածին Որդւոյն, որ նաեւ եղաւ կատարեալ մարդ կուսական ծնունդով՝ եւ է բացարձակ սուրբ եւ անսխալական:

բ. Որ մեռաւ մեղաւորներուն սիրոյն եւ անոնց համար փոխանորդական մահուամբ. Անոր խաչին վրայ թափած քաւչարար արեան գորութեանը:

գ. Որ փառքով յարութիւն առաւ նովին մարմնով՝ մեղաւորները արդարացնելու համար, շատերուն երեւցաւ, համբարձաւ սոյն մարմնով եւ հիմա Հօրը աջ կողմը նստած՝ մեր իրական եւ միակ բարեխօսն է:

դ. Որ նոյն փառաւորեալ մարմնով նորէն պիտի գայ յաւիտականելու իր հարսը — Եկեղեցին եւ ապա իր փրկած սուրբերուն հետ թագաւորելու ու նաեւ դատելու ապստամբ աշխարհը:

Դ.— ԵՐԿՆԱԽՈՐ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆՑ, այսինքն,

ա. Երկինքի գոյութեան, նաեւ անոր սուրբ ու հաւատարիմ բնակիչներուն, — հրեշտակաց գոյութեան անոնց անձնաւորութեան եւ գործունէութեան:

բ. Դժոխքի գոյութեան, նոյնպէս Սատանայի ու անոր արբանեակներուն գոյութեան անոնց անձնաւորութեան եւ կործանարար գործունէութեան:

գ. Սատանայի ամօթալի պարտութեան եւ օգի իշխանութեան վերջնական դատապարտութեան:

(Շար.)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԸ ՃԱՆՉՆԱԼ

(Նոր առարուան Խորհրդածութիւններ)

Ճանչնալու զԱնիկա... Փիւ. Գ. 10

Սիրելի ընտանիք «Բանբեր»ի,

Հազար ինը հարիւր երեսուն եւ հինգը անցաւ պատմութեան կարգը: Այսօր կ'ողջունենք նոր տարին: Կ'ուրախանանք որ մեզի շնորհուեցաւ այն, մինչդեռ շատերու ոչ: Այդ ուրախութեան կ'ընկերանայ նաեւ սրտի անձկութիւն մը անձանթ, որովհետեւ կը տեսնենք որ մեր առջեւ ամէն ինչ մութ է ու մենք երկիւղած կը հարցնենք մեզի թէ արդեօք ի՞նչ անակնկալներ ծրարուած են զալիք օրերուն մէջ:

Բայց փառք ըլլայ Տէրօջը, մենք պէտք չունինք երկար մտաւորանքներու աշխարհի նման: Գիտենք թէ ինչ ալ պատահի մեզի, տրամաւոր լինելով ուրախութիւն, թախիծ կամ հանդիսութեան, այդ ամէնը կուգան մեզի երկնաւոր Հօրմէն, որ դիտէ մեր առօրեայ պարագաներէն մեծ օրհնութիւններ հանել եւ անակնկալներուն հանդէպ եւ անոնց մէջ զմեզ խաղաղութեամբ լիցնել: Ուստի յայտնապէս մեծ վստահութեամբ կրնանք քայլ նետել նոր տարուան սեմէն ներս, որովհետեւ Տէրը մեզի հետ է: Այո, մեզի հետ է Ան մեր բոլոր ժամերուն ու վայրկեաններուն, մեզի առաջնորդելու:

Այսպէս Օրհնեալ Փրկիչը կը դառնայ մեզի ամենօրեայ սորվելու առարկայ: Մեր աչքերը Անոր կը նային զԱնիկա ճանչնալու: Պօղոս առաքեալ ալ որ երբայեցի էր, Բենիամինի ցեղէն, փարիսեցի, օրէնքին նայելով անարատ, բայց ասոնց ամէնը աղանդութիւն կը սեպէր Քրիստոսը շահելու եւ զԱնիկա ճանչնալու համար...: Այս նշանաբանը շարունակեց Պօղոսի կեանքին բոլոր օրերը՝ ու տարիներու ընթացքին իր արժէքը երեւց չկորսնցուց: Պօղոս հասկցած էր թէ քրիստոնէական կեանքին բուն նպատակը զԱյն ճանչնալն էր: Այս ըլլալու է ամէն մէկ հաւատացեալի զործը եւ թող ըլլայ մեր այս տարուան նշանաբանը, — ճանչնալու Քրիստոսը:

Ձանիկա կը ճանչնանք առաջին անգամ ճիշդ այն տեղ ուր առաջին աշակերտները ճանչցան:

«Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ» է այն ոճը որով ներկայացուեցաւ Անիկա Մեսիայի ակնկալութիւնովը լեցուն երկու փնտռողներուն: Ու ներկայիս ալ բոլոր խաղաղութիւն փնտռողներուն, փրկութեան ծարուածներուն աւետիսն է «Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ»: Ուստի սիրելի ընթերցող, եթէ դեռ վերստին ծնած ըլլալու վստահութիւնը չունիս, նոր տարուան առթիւ Բանբերի առաջին փափաքը՝ քեզի ցոյց տալ է զԱյն, Աստուծոյ Գառը, որ քու մեղքդ վերցուցած է խաչին վրայ: Հաւատա Անոր, վստահէ, զղջա, ապաշխարէ քու մեղաւորութեանդ վրայ եւ դիմէ Գառին արեանը որով քառութիւն եղած է նաեւ քեզի: Ճանչցիր զԱյն, հաւատա Անոր ու փրկուէ եւ հազիր Քրիստոսի արգարութեան հազուադէպ:

Տէրը տայ որ այս կերպով ճանչնաս Քրիստոսը: Ուրիշ ճամբայ չկայ փրկութեան: Հայրը զքեզ չկրնար ընդունիլ բաց միայն Անով: «Անիկա է իմ սիրելի Որդիս, Աստուծոյ մօտիկ ըրէք», «Մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ Ինծիով», կ'ըսէ Յիսուս: Կը Յիշէ՞ք որ Փարաւոն իրմէ հացի համար ազազակող ժողովուրդին ըսաւ. «Յովսէփին զացէք», (Ծննդ. ԽԱ. 55): Նոյնպէս Հայրը Իրեն զիմով իւրաքանչիւր անձի կ'ըսէ, «Որդիս գնա, շտեմարանները միայն Անոր բանալիովը կը բացուին, զուն միայն Անոր մէջ կրնաս յագուրդ գտնել»: Գնա միայն Յիսուսի: Ձանիկա ճանչնալ քու զեղեցիկ մէկ գործդ ըրէ, սիրելիս:

Ձանիկա կրնանք ճանչնալ նաեւ Իր մէկ խօսքին մէջ: Երբ Ինքը խաչին փայտէն կախուած էր, այն տեղէն աղաղակեց, «Ամէն բան կատարուեցաւ»: Այս ամէն բանին մէջ պարփակուած է յիշաւի ամէն բան: Ի՞նչ բան կատարուեցաւ ինծի համար: Ամէն բան, իմ փրկութիւնս կատարուեցաւ Անոր միջոցաւ: Իմ կեանքս ապահով է այս կատարումին մէջ: Անցեալի հաշիւներս փակուած են, Իր ձեռքն է նաեւ ներկաս, ապագաս: Յաւիտենական ծրագիրը կատարուած է: Իմ ժառանգութիւնս ինծի ապահովուած է. ես երկնային քաղաքացի մըն եմ. ասիկա ոչ թէ երեւակայութիւն մը, ալ իրողութիւն մըն է, հաստատուն եւ անհամեմատօրէն իրական: Ու թէեւ այժմ փորձութեանց դէմ կուրծք աւալով կը պայքարիմ անհամեմատ ուժերու հետ եւ զիս պաշարող սեւ խորհուրդներէն հալածուած յաճախ տեղի տալու աստիճան կը տկարանամ, այդ լոյս խօսքը կ'արձագանգուի մտքիս մէջ, «Ամէն բան կատարուեցաւ»: Ուստի չպիտի պարտուիմ

Իմ յաղթութիւնս կատարուեցաւ երկու հազար տարիներ առաջ Խաչին վրայ Փրկչիս յաղթող մահուամբը:

Կայ սակաւս դիւրաւ պաշարող մեղք մըն ալ որ ամէն օր իմ սիրտս անհանգիստ կ'ընէ, ամէն օր կը վրդովէ զգացումներս, կը տրտմեցնէ հոգիս եւ զիս լուակեաց, անկարող, տկար կը ձգէ: Զիս կը յոգնեցնէ, կը թմրեցնէ յարածամ հարուածելով, այսու ամենայնիւ Տէրոջը այդ կենսատու խօսքը կրկին կ'արձագանգէ սրտիս ծալքերէն ներս, «Ամէն բան կատարուեցաւ», Այո՛, այդ դիւրաւ պաշարող մեղքն ալ, որմէ ամենէն շատ յաղթուած եմ եւ որուն տկամայ գերին եղած եմ, անիկա կատարուած է: Ալէլուիա: Վրայէս կը թոթափեմ դայն, խաչին կը փաթթուիմ եւ Անով կը քալեմ դէպի առաջ: Յաղթութիւն ունիմ Անոր մէջ, խոստումը ինծի է:

Այս խօսքը զօրութիւն ունի նաեւ մեր բոլոր նիւթական եւ հոգեւոր ամէն պարագաներուն մէջ:

Ճանչնանք զԱնիկա այս տարուայ ընթացքին՝ այս խօսքին ամենալայն առումովը:

Զանիկա պիտի կարենանք ճանչնալ նաեւ Բ. Կոր. Գ. 3-ով: Անիկա է մեր բաւականութիւնը: Այս բաւականութիւնը կրնանք նկատի առնել երկու տեսակէտով. ա. մեր նիւթական պարագաներուն, Բ. մեր կոչումին եւ անոր գործնականացումին յարաբերութեամբ: Օ՛, ի՛նչ մխիթարաբական է գիտնալ թէ Քրիստոս մեր բաւականութիւնն է մեր նիւթական պարագաներուն մէջ ալ ու որքա՛ն քաջալերական է գիտնալ թէ Ինքը ամէն բան կանխատեսած եւ անոր համար ալ կարգադրութիւն ըրած է: Իսրայէլի համար Նա այս կարգադրութիւնը Յգիպտոսէ ելլելէն առաջ արդէն ըրած էր:

Ժողովուրդը հաւատացած ու ճամբայ ելած էր, բայց ճամբու ընթացքին անոնք իրենց շարունակական ցանկութեանց անսալով եւ չնայելով իրենց մէջ կենդանի եղող աղբիւրին, արտենջեցին Մովսէսի դէմ, որ մարդ ըլլալով իրեն սահմանէն վեր բան մը չէր կրնար ընել: Իսրայէլ այդ ցանկութիւններէն շարժուած կ'անտեսէր Տէրը, որ իրեն բաւականութիւնն էր: Միթէ՞ անոնք իրենց ամենամեծ ջանքերովն իսկ պիտի կարեկանային անապատին մէջ բաւականաչափ հաց, միս ու ջուր գտնել: Տէրն էր այդ բաւականութիւնը որ մանանա տուաւ մինչեւ այն օրը, երբ ալ հաց ունեցան, լորամարգի տուաւ մինչեւ այն օրը երբ իրենք լորամարգու երկրին մէջ կըրցան գտնել միսը: Անոնք սուրբելու էին թէ «ոչ

միայն հացով կ'ապրի մարդ, հապա մարդը Տէրոջը բերնէն ելած ամէն խօսքովը կ'ապրի: Այս քառասուն տարին քու վրայէդ լաթերդ չհինցան ու ոտքերդ չուռեցան» Բ. Օրին. Ը. 3, 4: Ա՛հ, երանի՛ թէ բոլոր մեր անգործ եղբայրներն ու քոյրերը կառչէին այս համարներուն. անոնք օր մը աշակերտներուն պէս պիտի ըսէին. «բանի մըն ալ պէտք չունեցանք»: Որքա՛ն ցաւալի է որ կարգ մը Աստուծոյ զաւակներ, երբ իրենց եկամուտները կ'սկսին նուազիլ, անմիջապէս պիտո՛ճէի սեղմումներու կը ձեռնարկեն եւ այն սեղմումները կ'սկսին նախ Տէրոջը գործէն: Հոգեւոր տուրքերը կը կրճատեն, գանձանակին դրամը կը պզտիկցնեն կամ հեռուէն կ'անցնին, հոգեւոր թերթեր կը դադրեցնեն: Միեջգեռ ասոր հակառակն է Աստուծոյ ծրագիրները ճանչցող Աստուծոյ զաւակներուն ըրածը. անոնք նախ արտաքին բաները կը կտրեն, նոյնիսկ հացն ու պանիրը, բայց Տէրոջը տալիք տուրքերը աւելի կը շատցնեն, քանզի բնականը այդ է, Աստուծոյ տուողը իր անձին համար գանձ կը զիգէ:

Տէրը ճանչնանք այս առումով սիրելի ընթերցողներ:

Բայց կայ երկրորդ կէտը որ նոյնքան արժէքաւոր է, այսինքն Տէրը ճանչնալ մեր կոչումին գործնականացումին տեսակէտով:

Բարձր է մեր կոչումը, մեր ուսելը, մեր խումելը, մեր օրական գործունէութիւնը, մեր խօսակցութիւնը մեր պաշտօնական ու մտերիմ յարաբերութիւնները ցոյց տալու են Տէր Յիսուս Քրիստոսը: Սուրբ եղէք, քանզի Ես սուրբ եմ: Վասնզի Աստուծոյ կամքը այս է, այսինքն ձեր սուրբ ըլլալը Ա. Թես. Դ. 3: Հոգեւոր այս բարձր կեանքին, հոգիներու հանդէպ մեր ունեցած պաշտօնին, անոնց փրկութեան համար մեր ընելիք բոլոր ջանքերուն ո՛վ բաւական է: Դոճութիւն Աստուծոյ, Անիկա է մեր բաւականութիւնը: Մենք չէ որ սուրբ կեանքը պիտի ապրինք, հապա Քրիստոս մեր մէջ: Մենք չէ որ հոգիներու համար ցաւ պիտի քաշենք, այլ Քրիստոս մեր մէջ: Քրիստոս մեր բաւականութիւնը, Անով կարելի է ամէն բան: Այս առումով այս աւարի ճանչնանք Քրիստոսը եւ Անիկա մեզի աւելի ճանաչելի, աւելի մտերիմ, աւելի սիրելի դառնայ:

Ու Ինք, խաղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին ու շունչը եւ մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու ատենը: Հաւատարիմ է Ան որ ձեզ կանչեց եւ պիտի կատարէ ալ:

Յ. Ն. Դ.

ՀՈԳԵԿՈՐ ԿԵԱՆՔ

«ԶԻՍ ԿԸ ՍԻՐԵՄ»

(ՅՈՎՀ. ԻԱ. 15-17)

Դասախօսուած Վեր. Ա. Զ. Եղոյեանէ Միու-
թեան ժողովին մէջ

○○○○○○○○○○○○○○○○○○○○

Տէր Յիսուսի յարութենէն վերջ՝ ինչպէս ա-
պրտուած էր իրենց, աշակերտները Գալիլիա
գացած էին: Մինչ հոն են, ձուկ որսալու կ'եր-
թան: Գիշերային անյաջող փորձերէ վերջ, Տէ-
րը անոնց կ'երեւի եւ կը խօսի: Երբ Անոր կը
հնազանդին՝ հրաշալի որս մը կ'ընեն: Յետոյ կը
հրաւիրուին ճաշելու: Ճաշէն ետքը Յիսուս խօս-
քը Պետրոսի ուղղելով կ'ըսէ.—

«ԶԻՍ ԿԸ ՍԻՐԵՄ»

Ա. Այս հարցումը Յիսուսի օրհնեալ շրթնե-
րէն ելած է: Շատ անգամ քարոզի նիւթ եղած է
ան: Երանի թէ մեր առօրեայ խօսակցութեան
ալ նիւթ ընէինք զայն: Եւ աւելի լաւ ըրած պի-
տի ըլլանք, եթէ յաճախ այս նոյն հարցումով
մեր անձերը քննենք: Անոնք նոյնիսկ՝ սրոնք
Պետրոսի պէս վստահ են թէ Տէրը կը սիրեն,
զարձեալ թող իրենց անձերուն ուղղեն այս
ՄԵԾ ՀԱՐՑՈՒՄԸ, — «ԱՐԴԵՑԻ ԵՎ ՏԵՐԸ ԿԸ ՍԻ-
ՐԵՄ, ԻՐԱՆ ԿԸ ՍԻՐԵՄ, ԼՄԱՆ ԿԸ ՍԻՐԵՄ»: Այս
հարցման յաճախակի կրկն վժիշկը երբեք աւե-
լորդ կամ պարսպ չըլլալէ զատ՝ բոլորովին ա-
պահով է եւ խիստ շահեկան:

1) Տէր Յիսուս ԱՆՀՈՒՆ ԷԱԿ մը ըլլալուն՝ կարե-
ւի չէ զԱյն մէկ անգամէն ԼՄԱՆ ըմբռնել, ԼՄԱՆ
ճանչնալ, հետեւաբար ոչ ալ ԼՄԱՆ սիրել: Այն
աստիճան կրնանք մէկը սիրել, որ աստիճան որ
զայն կը ճանչնանք: Ուստի օրէ օր Տէր Յիսուսը
աւելի ճանչնալու ետեւէ ըլլալու ենք, որպէսզի
Անոր վրայ ունեցած մեր սէրն ալ աստիճանաբար
աճի, խորունկնայ եւ ընդարձակի: Թող հաւա-
տացեալը փորձէ իր խորհրդածութեան շարու-
նակական նիւթ ընել ՅԻՍՈՒՍԸ, եւ պիտի տես-
նէ թէ իրականին մէջ որքա՞ն պակաս եւ որ-
քա՞ն քիչ կը սիրէ իր օրհնեալ Փրկիչը:

2) Ու դեռ ի՞նչ պիտի ըլլայ մեր խորհրդածու-
թեան նիւթը յաւիտենականութեան մէջ, չէ՞ որ
«ՅԻՍՈՒՍ», զոր ինչ նոր աստիճաններով որ
ճանչնանք, յարաւորօրէն աճող նոյն համեմա-

տութեամբ ալ պիտի սիրենք զԱյն: Եւ ճիշդ
այս է առաւելապէս որ երկինքը մեզի երկինք
պիտի դարձնէ: Զի երկինքի գեղեցկութեանց
գեղեցկութիւնը Յիսուսն է եւ զԱյն ճանչնալն ու
սիրելը՝ մեր բաւականութեան եւ ուրախութեան
ԱՂԲԻԻՐԸ:

Ուրիշ կէտ մըն ալ.—

3) Երբ մէկը արգարութեամբ եւ զգաստութեամբ
ինքզինքը քննէ, ապշութեամբ պիտի տեսնէ թէ
«Յիսուսը կը սիրեմ»ի համոզման քօղին աւակ ԻՐ
ՈՆՁԸ կը սիրէ: Ասիկա (անձնասիրութիւնը)
նուրբ, ծպտեալ եւ դիւրաւ պաշարող մեղք մըն
է: Այս դիւրագրաւ մեղքին սերմէն խուսափելու
ամենաապահով միջոցն է միշտ ինքզինքնուս
հարցնել, «ԻՐԱՆ ՏԵՐԸ ԿԸ ՍԻՐԵՄ»: Պետրոս
շատ անկեղծութեամբ ըսաւ թէ իր բոլոր ընկեր-
ներէն աւելի կը սիրէր Տէրը, բայց տակաւին
«խաւեցաւ եւ փորձը հաստատեց»:

Բ. Այս առաւօտեան խորհրդածու-
թիւնը խիստ այծմէական եւ օգտակար նիւթ մըն է որմէ
բոլորս ալ կրնանք օգտուիլ եւ օրհնուիլ:

1) Տէրը վրայ ունեցած մեր սէրէն կը բղ-
խի իրարու վրայ ունեցած մեր սէրը: Ի՞նչ չա-
փով որ Տէրը կը սիրենք եւ Անոր կը մտերմա-
նանք, նոյն համեմատութիւնով ալ իրարու կը-
նանք կապուիլ եւ զիրար սիրել:

2) Եղբայր. երու եւ քոյրերու ու մանաւանդ
հոգեւոր գործաւորներու միջեւ ծագած դժուարու-
թիւնները, անհամաձայնութիւնները, պժտու-
թիւններն ու բաժանումները ի՞նչ բանի հետե-
ւանքներ են, չէ՞ որ սիրոյ պակասին: Եւ իրարու
հանգչել ունեցած մեր սիրոյ պակասը արդիւնքը
չէ՞ արդեօք Յիսուսի վրայ ունեցած մեր սիրոյ
պակասին: Անշուշտ: Եւ զարմա՞նք: Պարզ է: Իւ-
րաքանչիւր հաւատացեալ ինքն իրեն հարցնելու
է «ՅԻՐԱԽԻ ԵՎ ՏԵՐԸ ԿԸ ՍԻՐԵՄ»: Անձնաքննու-
թեան այս հարցումին պատասխանը Յովհաննէս
սիրոյ առաքեալը կուտայ, «Ամէն ով որ Ծնողը
կը սիրէ, Անկէ ծնածն ալ կը սիրէ» (Ա. Յովհ.
Ե. 1): Հարկաւ, եթէ Տէրը վրայ մեր ունեցած
սէրէն ըզխող սիրով զիրար սիրենք, այն ատեն
թէ՛ հաւատացեալներու եւ թէ՛ պաշտօնեանե-
րու միջեւ աւելի հասկացողութեան եւ միաբա-
նութեան, համաձայնութեան եւ համագործակցու-
թեան, փոխադարձ ներողամտութեան եւ զիրար
կրելու հոգին պիտի թագաւորէ:

Քրիստոսը շիտակ ճանչնալը եւ զԱյն անկեղ-
ծութեամբ սիրելը մեզ կը ցածցնէ, կը խոնար
հեցնէ: Իւրաքանչիւր Տէր Յիսուսը ճանչցող եւ
սիրող իր սխալը, իր յանցանքը, իր մեղքը կը

տեսնէ եւ ոչ թէ ընկերինը: Այդ մեծ հարցումէն բղխող սէրը՝ այլոց «մեղաց բազմութիւնը կը ծածկէ» բայց իր մեղքերը կը քողագեղծէ: Արդ, կ'արժէ որ հիմա մոռնալով ամէն մարդ եւ ամէն բան, իւրաքանչիւրը իր անձին հարցնէ, «Ես Ան-կեղծՈՒԹԵԱՄԲ եւ ԼՄԱՆ Տէրը կը սիրե՞մ: Տէրն ալ կը հաւատա՞յ որ ես զինք կը սիրեմ»: Այո, այս հարցումը կը խոնարհեցնէ, կը խոստովան-ցընէ, կը սրբացնէ... Տէրը օրհնէ մեզ:

Ես այն տպաւորութիւնը առած եմ թէ ժրանսահայ Աւետ. եկեղեցւոյ գործաւորները իրարու հետ սի-րով կ'ապրին: Այսպէս լսած եմ միշտ: Այս այցելու-թեամբ ձեր մէջ գտնուելու զիս այս աղուոր համադ-մանս մէջ աւելի հաստա-տեց: Ուրախ եմ Սակայն ենթադրենք որ խուլ անհա-մաձայնութիւններ ըլլան ձեր մէջ: Այդ պարագային անսխալ դարձանք դարձ-եալ այս ամենաբոյժ հար-ցումն է, որ ամէն մէկը իր անձին յղելու է թէ «Տէր Յիսուսը կը սիրե՞մ»: Այդ Սէրը ամէն բան կը մաք-րէ, ամէն բան կը կարգադ-րէ: Երբ այս բաները կը խօսիմ, զիտեմ թէ ասոր փորձառու էք եւ աւելի պի-տի ըլլաք յետ այսու:

Յիսուս Պետրոսի չհար-ցընէր թէ գիտո՞ւն ես, լաւ Աստուածաբա՞ն ես, աղէկ կը վարդապետե՞ս, գոր-ծունեա՞յ ես: Ո՛չ: Այլ կը հարցնէ թէ «Զի՞ կը սի-րե՞ս»: Եթէ վերի հարցումները ուղղուէին Պե-տրոսի, Թերեւս իր թշուառութեան մէջ դարձեալ հպարտանալու փորձութիւնը ունենար ու ըսէր, — Այո՛, այդպէս եմ: Սակայն Տէրոջը հարցումը Պետրոսը գետնահարեց, մեղցո՛ւց...

Երբ հոգեւոր գործաւոր մը ինքն իրեն կը հար-ցընէ, — Ս. Գիրքը իմ պաշտօնակիցներէս աւե-լի կը քննե՞մ, աւելի կը հասկնա՞մ, աւելի կը վարդապետե՞մ, աւելի գործունեա՞յ եմ, իմ աշ-խատութեամբս հոգիներ կ'ապաշխարե՞ն, եւ ինքն

իրեն յղած այս հարցումներուն «ԱՅՈ» կը պա-տասխանէ, այդպիսին վառնգի մէջ կը զըտ-նուի: Այդ կերպ հարցումը եւ պատասխանը կոր-ծանարար է, հպարտութեան ախտանիշ է: Օգ-տակար հարցումն է, «Ես Տէրը կը սիրե՞մ»:

Գ. Տէրը երեք անգամ կը հարցնէ Պետրոսի, «Զիս կը սիրե՞ս»: Գիտե՞ք ինչու, որովհետեւ երեք անգամ ուրացաւ: Տէրը կ'ուզէ զայն իր անկում-ներուն համեմատութեամբ խոնարհեցնել: Լման խո-նարհեցնել:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՏԵՆՉՍ

Ինչ որ ինծի շահ էր... ամէն բանէ զըր-կուեցայ եւ ԱՂՏԵՂՈՒԹԻԻՆ կը սեպեմ, որպէսզի Քրիստոսը շահիմ ու իր մէջ գտնուիմ... ՃԱՆՉՆԱԼՈՒ զԱՆԻԿԱ...

Ս'ի, իմ բոլոր տենչերուն
Բարձրագոյնն այս է Յիսուս,
— Որ օրէ օր աւելի
Ճանչնամ գթեզ լիւսի:

Խոհանքներուն մէջ Թաքուն,
Կամ գրադմանցը պափուն՝
Կեդրոնածիկ զերթ մագնիս,
Ըլլաս առանցքը կեանքիս:

Է՛ն մըտերիմ սըրտերէն,
Է՛ն զգըլխիկ կապերէն՝
Անհունօրէն աւելի
Դառնաս ինծի ցանկալի՛:

*
**

Այսպէս, Սիրաւոր ինծի ՏՈՒՆ,
Ուր ես ապրիմ օրն ի բուն.
Սիրտս ալ ՏԱՃԱՐ՝ ուր քեզի,
Սէրըս անդու հրկիզի՛...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօմա

1) Մէկ անգամ Տէրը ու-րանալ արդէն ահաւոր բան մըն է: Երկրորդ անգամ ու-րանալը աւելի դառն եւ ա-հարկու անկում մը չէ՛: Ի՛նչ ողբալի վիճակի մէջ իյ-նալ մըն է երրորդ անգամ «Փառաց Տէրը» ուրանալը: Պետրոս առաջին անգամին մեղանչեց, երկրորդին շեշ-տաւորեց իր մեղքը, իսկ երրորդ անգամին վաւերա-ցուց եւ կնքեց իր անկու-մը: Տխուր եւ արդահատե-լի չէ՞ր Պետրոսի այս վի-ճակը: Տէրը ի՛նչ դառն վիշտ զգաց այս պարագային: Աս-տիճանաբար սահեցաւ Պե-տրոս, մինչեւ իր Տէրը ԱՆԻ-ԾԵԼՈՒ... եւ Տէրը իւրա-քանչիւր անկման համար զայն խոնարհեցնելու եւ բարձրացնելու նպատակաւ ուրիշ պէնք չգործածեց եթէ ոչ այս հարցումը, «Զիս կը սիրե՞ս»: Այս հարցումը բա-ւեց. — Պետրոս տրտմեցաւ, խոնարհեցաւ, կանգնեցաւ:

Տէրը չընէ որ մենք ալ նորնպէս իյնանք: Զգուշանալու ենք: Բայց մեզ-մէ ամէն մէկուն հնարաւորութիւնը կայ մեղան-չելու եւ իյնալու: Կարելի է որ մեղք գործենք: Յովհաննէս կ'ըսէ, «Իմ որդեակներս, այս բանե-րը ձեզի կը զրեմ որպէսզի մեղք չգործէք, բայց եթէ մէկը մեղք գործելու ըլլալ...»: Եթէ պատա-հի, անմիջապէս Տէրոջը դիմենք, կանգնինք: Շու-տով կանգնինք, ըսել կ'ուզեմ, անմիջապէս: «Բայց գոհութիւն Աստուծոյ որ մեզի միշտ ԿՐՆԱՅՅ յաղ-թութիւն տալ» որ չմեղանչենք: Եթէ յօժարինք,

Տէր Յիսուսի ձեռքը մեզ միշտ կրնայ բռնել: Փառք Իրեն:

2) Հո՛ւ Յիսուսի «Զիս կը սիրե՞ս» հարցման և Պետրոսի տուած «Դուն գիտես որ քեզ կը սիրեմ» պատասխանին մէջ գործածուած «Մէ՛ր» բառերը բնագրին մէջ տարբեր են, (սիրոյ տարբեր աստիճանաւորումներ արտայայտող բառեր են): Յիսուսի գործածածը (աբալօ) ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ցուցնող բառն է: Նորն բառերը կը գտնենք Յովհ. Դ. 16ի մէջ «Աստուած այնպէս սիրեց աշխարհը...»: Ա. Յովհ. Դ. 16ի մէջ, «Աստուած սէր է: Պետրոս չկրնար ըսել թէ ինք Տէրը կը սիրէ այդ մարդը, կատարեալ եւ աստուածային սիրով: Պետրոս խոնարհած է, իր մեծամտութենէն իջած եւ ցածցած է: Տէրոջը հարցումը զինք ծըռեց եւ ինք ի պատասխան Յիսուսի հալցին, պարզ, մարդկային եւ զգացական սէրը (Ֆիլիքս) յատկանշող սէրը կը գործածէ: Տէրը երկրորդ անգամ նոյն աստուածային սէրը արտայայտող բառով կը հարցնէ իրեն թէ «Զիս կը սիրե՞ս»: Եւ Պետրոս երկրորդ անգամ ըլլալով խոնարհած սրտով մարդկային սէրը ցուցնող բառերով կը պատասխանէ: Այս կը ցուցնէ թէ «Զիս կը սիրե՞ս» հարցումը զինք ինչ աստիճանի ծնած էր: Պետրոս ա՛լ յաւակնութիւնը չունի հպարտութեամբ կամ զատապարտելի անձնավատահութեամբ իր աշակերտակիցները (Տէրոջը միւս զաւակները) նսեմացնելու: Այլ չըսիր, «Թէպէտ ամէնքն ալ զայլթակղին, բայց ոչ թէ ես...»: Թէեւ Քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ինծի...», այլ կ'ըսէ, «Դուն գիտես որ Քեզ կը սիրեմ»: Օրհնեա՛լ հարցում, որ կը ծնուի, կը խոնարհեցնես, կը մաքրես...:

3) Երրորդ անգամին, Յիսուս աստուածային սէրը արտայայտող բառին տեղ Պետրոսի գործածած պարզ սիրոյ բառը դնելով կը հարցնէ, «Զիս կը սիրե՞ս»: Այս անգամ Պետրոս կը արտմի, վասնզի կը տեսնէ որ իր անկեղծ սէրը կասկածի տակ է: Կը արտմի մանաւանդ, որովհետեւ նոյն հարցման երեք անգամ կրկնուիլը իրեն անկումը եւ իր սրտին անկայունութիւնը իրեն կը յիշեցնէր: Այս անգամ Պետրոս կատարեալ խոնարհութեամբ ինքզինքէն հրաժարելով եւ Յիսուսի ամենագիտութեան կոթնելով կը պատասխանէ «Տէր, ԴՈՒՆ ԱՄԷՆ ԲԱՆ ԳԻՏԵՍ, Դուն գիտես որ ես Քեզ կը սիրեմ»:

«Զիս կը սիրե՞ս» հարցումը եթէ մեր ամենէն խորունկ տեղերը թափանցող ՍՈՒՐ մըն է, նաեւ մեր մտքին, սրտին, եւ հոգիին ամենածածուկ ու ճիշդ վիճակը արտացոլացնող հայելի մըն է, որ մեզ՝ ճշգրտութեամբ մեղի կը ցուցնէ, կը ճանչցնէ:

Ինքզինքը ճանչնալ մեծ շնորհք մըն է: Ճշմարտութեամբ ինքզինքը ճանչնալ աւելի մեծ շնորհք մըն է: Կամ աւելի պակաս ինքզինքը ճանչնալ խիստ վտանգաւոր է: Աւելի անձնահամարումը՝ կրնայ հպարտացնել: Պակաս անձնահամարումը կրնայ յուսալքել: Այս երկու ծայրայեղութիւններն ալ կործանարար են: Ինքզինքը ճշմարտապէս ճանչցողը «Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհած» կը կենայ: Այս դիրքը սրբացման եւ բարձրացման առաջին պայմանն է: Պետրոսի փորձառութենէն կրնանք օգտուիլ եւ օրհնուիլ:

Դ. Պետրոս կը խոնարհի, Տէրն ալ անոր գործ կուտայ եւ այդ գործը աստիճանաբար կը մասնաւորէ: Նախ կ'ըսէ, «ԱՐԱԾԷ ԻՄ ԳԱՌՆՈՒԿ ՆԵՐՍ», ապա «ԱՐԱԾԷ ԻՄ ՈՉՆԱՐՆԵՐՍ»: Թարգմանութիւններու «արածէ» բառերը բնագրին մէջ երեք տարբեր նշանակութիւն ունեցող բառեր են: Բառերը իրենց յատուկ տեղը եւ նշանակութիւնը ունին Աստուծոյ խօսքին մէջ:

1) «ԱՐԱԾԷ Իմ գառնուկներս»: Ի՞նչ ըսել է արածել: Շատ պարզ է: Տար դաշտը եւ հոն թող իմ գառնուկներս ճարակին: ՔՍՐՈՁԷ եւ անոնք թող քարոզութեան մարդադեմներն մէջ արածին, սնանին: Բնադրին առաջին բառը այս է, «ԱՐԱԾԷ»:

2) «ԿԵՐԱԿՐԷ Իմ ոչխարներս»: Այս բառը «արածել» բառէն տարբեր է: Ուրիշ նշանակութիւն ունի: Հոս բառը կը նշանակէ ամէն մէկ ոչխարը իր տարիքին, իր վիճակին և կարողութեանը մէջ ճանչնալ, անոնց հետ մտերմանալ եւ զանոնք կերակրել, սնուցանել անոնց ճիշդ ՊԵՏԻՆ համաձայն: Աւելի պարզ, հոս «ԿԵՐԱԿՐԷԼ» բառը կը նշանակէ ձեռքովդ խոտը քաղել բերել եւ ավովդ խոտը կերցնել: Սէր եւ սնունդ, քու փովդ բերուելու է իւրաքանչիւր ոչխարի: Պէտք է այցելել, պէտք է ճանչնալ մէկիկ մէկիկ զառնուկ թէ ոչխար: Պէտք է անոնց հետ մտերմանալ, անոնց ճիշդ վիճակը եւ տարողութիւնը հասկնալ: Անոնց տկար եւ զօրաւոր կողմերը ճանչնալ: Ապա շատ խոհեմութիւնով, զգուշութեամբ, ընտրողութեամբ անոնց օգտակար և անհրաժեշտ ճարակը մեր փովը անոնց կերցնելու ենք: Այս է բնագրական երկրորդ նշանակութիւնը, «ԿԵՐԱԿՐԷ»:

3) «ՀՈՎՈՒԷ Իմ ոչխարներս»: Երրորդը՝ նախկին երկու բառերէն տարբեր է: Հովուել ըսել է ԱՌԱՋՆՈՐԴԵԼ, ԿԱՌԱՎԱՌԵԼ, ՀՍԿԵԼ: ԱՌԱՋՆՈՐԴԵԼ՝ Հօտը (պզտիկ և մեծ ոչխարները միասին) հո՛ւ ուր է ճշմարիտ արօտը: ԿԱՌԱՎԱՌԵԼ՝ զանոնք (իւրաքանչիւրը ի մի) ամենայն իմաստ

տութեամբ եւ կարգապահութեամբ, կառավարիչի մը պէս՝ բայց հովուական սիրով եւ ճշմարտ խոնարհութեամբ: ՀՍԿԵԼ ամբողջ հօտին վրայ, ամէն մէկ գառնուկի եւ ոչխարի ուշադրութիւն ընկնով: Վտանգի ժամանակ զանոնք պաշտպանելով, նոյնիսկ եթէ հարկ է կեանքիդ գնովը, Հայրական եւ մայրական գործով, անձնուրացութեամբ եւ անձնագոհողութեամբ: «Բարի Հովիւը իր կեանքը իր ոչխարներուն համար կը դնէ: Բայց վարձկանը որ հովիւ չէ, երբ կը տեսնէ զայլը որ կուգայ, կը ձգէ ոչխարները ու կը փախչի»:

Այս հատուածին մէջ «ԳԱՌՆՈՒԿ եւ ՈՉԽԱՐ» բառերը կը գործածէ Տէրը, պարզապէս հօտին մէջ եղող իւրաքանչիւր անհատին անձնայատուկ վիճակը գատորոշելու համար: Տաբէցներ կան, դեռատիներ կան. նաեւ մանուկներ նոյն հօտին մէջ: Կան տկարներ, հիւանդկախ անդամներ. կան նաեւ տոկուն եւ զօրաւոր հոգիներ: Հոգեւորապէս յառաջացեալներ եւ զարգացեալներ կան, և յետամնաց ու ապէտ հոգեւոր ոչխարներ ալ քիչ չեն գտնուիր հօտին մէջ: Ծիշդ այս պատճառաւ ՀՈՎՈՒՆԵԼԸ աւելի բարձր և պատասխանատուութիւն կրող պաշտօն մըն է: Ասիկա ըսինք, ալա. ծելէն եւ կերակրելէն տարբեր քան մըն է: Եւ նայեցէք, գառնուկը հեռուները չերթար, իսկ ոչխարը կ'երթայ (ինքնահաւան եւ ինքնավստահ ոչխարը յաճախ հեռանալու փորձութեան ենթակայ է), ուստի պէտք է մասնաւոր ուշադրութեամբ անոր վրայ հսկուի: Այդ կարգի ոչխար մը որքան հեռանայ, այնքան վտանգը, նոյնիսկ երբեմն մահու վտանգը անխուսափելի կը դառնայ եւ ուստի աւելի ուշադրութեամբ հսկելու ենք: Դարձեալ, կամքով հեռանալ մը կայ որ վտանգաւոր է եւ ակամայօրէն հեռանալ մը կայ որ կրնայ վտանգաւոր ըլլալ: Ակամայօրէն ըսելով կը հասկնանք գործի ստիպողականութեամբ կամ ընտանեկան ունէ պարագայով հեռացումը: Այս պարագային ալ պէտք է հսկել թղթակցութեամբ: Գառնուկները զիտակից իրենց տկարութեան, հովուին խնամքներուն ինքզինքնին կը յանձնեն. մինչդեռ շատ յաճախ ոչխարները ինքնավստահ եւ ինքնազուխ կ'ըլլան, իրենց ուզածին պէս արածելու: Այս պարագային երբ մեծ ոչխարը կրնայ ինքզինքը կերակրել Ս. Գրքով, հոգեւոր թերթերով եւ թերթիկներով, կրնայ վտանգուիլ եւ փաստել: Արդ, պաշտօնեան, ըսել կ'ուզեմ հովուելու կանչուող պաշտօնեան, ինք պէտք է միշտ «ճշմարտութեան մէջ արածուի» որ կարողանայ ըստ արժանոյն եւ

իրողութեամբ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ, ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ եւ ՀՍԿԵԼՈՒ:

Այս նիւթը գործնական գիտութիւնն է մեր եւ մեզի յանձնուած հոգիներուն հետ ունենալիք հաղորդակցութեան:

Տէրը օրհնէ մեզ:

(Վեր. Ա. 2 ԵՂՈՅԵԱՆ)

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐՔ ԺԱ. ԳԼՈՒԽ Ժ

Աստուծոյ կամքը սկիզբ բռնի

Իրենց վատթարացման աւերակներով լեցուած ՀԵ՛Ն անոնք որ մեզի կ'ըսեն, «Ի՞նչ կ'ընէր Աստուած երկիրքն ու երկիրը ստեղծելէն առաջ: Եթէ անգործ կը մնար, ինչո՞ւ ելաւ իր այդ վիճակէն կամ ինչո՞ւ անգործութեան մէջ մտաւ: Եթէ Աստուծոյ մէջ նոր գործ մը գործուեցաւ, նոր կամք մը, էութիւն տալու համար արարածի մը որ դեռ դուրս չէր ելած ոչնչութենէ, ճշմարտ յաւիտեանականութիւն մը եղած կ'ըլլայ այն, որ կը ծնի կամք մը որ չկար: Քանզի Աստուծոյ կամքը արարած չէ, ալ արարածէն աւելի առաջ է: Ո՛չ մէկ արարած առանց ստեղծագործ կամքին նախագոյութեան: Ուրեմն Աստուծոյ կամքը իր էութեան կը պատկանի, եւ եթէ Աստուծոյ էութեան մէջ նոր բան մը երեւան եկած է, ա՛լ կարելի չէ զԱյն ճշմարտապէս յաւիտեանական կոչել: Եւ եթէ Աստուած ի յաւիտենից կամեցաւ արարածին գոյութիւնը, ինչո՞ւ ան ալ յաւիտեանական չէ»:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Աստուած ի՞նչ կ'ընէր ստեղծագործութենէն առաջ

Եւ ես կը պատասխանեմ այս հարցումին. «Աստուած ի՞նչ կ'ընէր երկիրքն ու երկիրը ստեղծելէն առաջ»: Կը պատասխանեմ, ո՛չ անոր նման որ խուսափեցաւ այսպիսի հարցման մը յարձակումներէն այս կատակով լծէ՝ «Աստուած չարչարանքներ կը պատրաստէր զաղտնիքները խուզարկողներուն»: Խնդալ պատասխանել չէ: Եւ ես այդպէս չեմ պատասխաներ: Ես պիտի նախընտրէի խոստովանիլ իմ տգիտութիւնս քան թէ ծաղ

րանքը հրաւիրել խորունկ հարցումի մը վրայ կամ գովեստը՝ ծիծաղելի պատաստանի մը վերայ:

Բայց ո՞վ իմ Աստուածս, կ'ըսեմ թէ դուն Հայրն եւ բոլոր ստեղծուածոց եւ եթէ բոլոր տարածոց ըսելով պիտի հասկնանք երկինքն ու երկիրը, բարձրաձայն կը յայտարարեմ, «Աստուած բան մը չէր ընէր»: Քանզի ինչ որ Ան յայնժամ ըրած ըլլար, միայն արարած պիտի ըլլար: Ո՛հ, ինչո՞ւ չունիմ բոլոր ինծի պէտք եղած բաներուն գիտութիւնը, ինչպէս որ գիտեմ թէ արարածը չէր ստեղծագործութենէն առաջ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ստեղծագործութենէն առաջ ժամանակ չկար

Թերեւս արդէն թեթեւ հոգի մը կը սլանայ երեւակայական տարիներու անցեալի մը եւ կը զարմանայ որ Ամենակարողը, Ստեղծիչ եւ Պահպանիչ աշխարհի, Ճարտարապետ երկնից եւ երկրի, թոյլ տուած է որ անսահման դարերու ովկէան մը հոսի անցնի, առանց ձեռնարկելու այս մեծ գործին: Այսպիսին թող արթննայ իր քունէն եւ նկատէ իր զարմացումին ունայնութիւնը: Քանզի ուսկից եկած պիտի ըլլային այդ անհամար տարիներուն ընթացքները, եթէ Դուն չըլլայիր անոնց հեղինակը, Դուն հեղինակ եւ հիմնադիր դարերու: Ո՞ր ժամանակը կրնար գոյութիւն ունենալ առանց Քու հաստատելուդ, եւ ի՞նչպէս կրնար անցած ըլլալ այդ ժամանակը որ չէր կրնար գոյութիւն ունեցած ըլլալ:

Եթէ դուն եւ բոլոր ժամանակներ շինողը, եթէ կը սեպեն թէ ժամանակ կար Քու երկինքն ու երկիրը ստեղծելէդ առաջ, ինչո՞ւ ուրեմն այնպէս ցոյց կ'ուտան թէ Դուն անգործութեան մէջ էիր, քանզի այդ ժամանակն իսկ Քու ձեռքիդ գործն էր, եւ ո՛չ մէկ ժամանակ կրնար անցնիլ, առանց Քու ժամանակը ստեղծելուդ: Եւ եթէ երկինքն ու երկիրն առաջ ժամանակ չկար, ինչո՞ւ ուրեմն հարցնիլ թէ ԱՅՆ ԱՏԵՆ ի՞նչ կ'ընէիր: Ինչու որ որ որ ժԱՄԱՆԱԿ չկայ, ԱՅՆ ԱՏԵՆ չի կրնալ ըլլալ: Եւ Դուն ժամանակով չէ որ կը կանխես ժամանակը, եթէ ոչ դուն եղած չէիր ըլլար ժամանակներէն առաջ: Բայց Դուն ժամանակները կը դերազանցես Քու միջոցներէդ յաւիտենականութեանդ պիտեանքովը: Դուն կը տիրես գալիք ժամանակին, վասնզի գալիք են եւ որոնք հասնելուն պէս անցեալ կ'ըլլան, իսկ

Դուն միշտ նոյնն եւ եւ Քու տարիներդ չեն թուէիր:

Քու տարիներդ ո՛չ կ'երթան ո՛չ կուգան եւ մերիները կ'երթան եւ կուգան որպէսզի բոլորն ալ գան: Քու տարիներդ բոլորն ալ միանգամայն կը մնան, վասնզի անոնք մնալուն են: Անոնք գիրար չեն հալածեր իրարու յաջորդելու վասնզի չեն անցնիր, եւ մերիները լման կրնան ըլլալ այն ատեն միայն, երբ բոլորը դադարին ըլլալէ: Քու տարիներդ միայն օր մըն են, եւ այդ օրը առանց շաբաթի է, այսօր է, եւ քու այսօրդ վաղուան տեղի չտար, եւ չյաջորդեր երէկուան: Քու այսօրդ յաւիտենականութիւն է: Այսպէս դուն Քեզի յաւիտենակից ծնար դԱյն Որու ըսիր, «Ես այսօր Քեզ ծնայ»: Դուն բոլոր ժամանակները ըրիր եւ Դուն բոլոր ժամանակներէն առաջ եւ, եւ չկար ատեն մը ուր ժամանակը չկար:

ԳԼՈՒԽ Լ(4)

Առանց գործի ժամանակ չըլլար

Եւ յայնժամ Քու մէջդ, Քու ճշմարտութեանդ մէջ, իմ էութեանս տիպարը, ամուր եւ հաստատուն պիտի ըլլամ եւ ալ պէտք պիտի չունենամ կրելու այն մարդոց հարցումները որոնք — զարնուած ու հետաքրքրութեան ջրգողութեան վատթարացումէն — կը հարցնեն, «Ի՞նչ կ'ընէր Աստուած երկինքն ու երկիրը ստեղծելէն առաջ: Կամ ի՞նչպէս Իրեն բան մը ընելու խորհուրդը եկաւ, քանի որ մինչեւ այն ատեն բան մը չէր ընէր»:

Ո՞վ իմ Աստուածս, իրենց այս խօսքերէն լաւագոյն խորհուրդներ ներշնչէ իրենց: Թող ըն-

.....

(1) 14-29րդ գլուխներուն մէջ Պոստմիսոս կը քննէ ժամանակին վերաբերեալ բազմակողմանի հարցեր, խորունկ, Թախանցող եւ հասու նայուածքով: Իր ցոյց տուած տրամաբանութիւնն ու հոգեւոր հասկողութիւնը զմայլելի են: Խնդիրներ կը տեսնէ հոն՝ որ մարդը չպիտի կռակածէր, եւ անբաժանելի Թուող կ'ընէր մը առաջադրելէ յետոյ կը լռած լայն: Անկեղծ պրպտող, լոյս եւ խորունկ մտածող, իրր ճշմարտութեան փաստարանն ու իմաստութեան հաւատքի հակառակ է որ Պոստմիսոսի կը յայտնուի իր այս իմաստովանութիւններուն մէջ: Ահա իր շօշալած նիւթերէն ու մանր. —

Ի նշ է ժամանակին չափանիշը: Ո՞ր է անցեալը, ո՞ր է ապագան: Ինչպէ՞ս անցեալը եւ ապագան նկարագրել: Ինչպէ՞ս անուանել տարրեր ժամանակները: Ժամանակն ինչո՞ք: Ժամանակը շարժումն չափանիշն է:

Զ. Բ. Պ.

դուներն թէ ԵՐԲԵՔԵՐ հոն չէր կրնար ըլլալ ուր որ ԺԱՄԱՆԱԿԸ չկայ: Այսպէս ըսել թէ բնաւ բան մը եղած չէ, ըսել չէ՞ թէ ոչինչ կ'ըլլայ առանց ժամանակի: Հասկցէ՛ք մարդիկ, թէ առանց գործի ժամանակ չկրնար ըլլալ եւ տեսէ՛ք ձեր խօսքերուն ունայնութիւնը: Թող իրենց ուշը դարձնեն Տէր, «Միշտ իրենց առջեւ ներկայ եղողին», թող հասկնան թէ Դուն բոլոր ժամանակներէն առաջ ես, յաւիտենական Ստեղծիչ բոլոր ժամանակներուն եւ թոյլ չես տար որ Քու յաւիտենականութեանդ բաժնեկից ըլլայ ոեւէ ժամանակ, ո՛չ մէկ արարած, նոյնիսկ մէկը որ ժամանակներէն առաջ եղած ըլլա՛ր:

Քաղուածաբար

Ձ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

“ՁԵՆՔ ԿՐՆԱՐ ԶԽՕՍԻԼ,”

○○○○○ — ○○○○○

Բայց Դուն իմ հոգիս սիրեցիր ու ապականութեան գուբէն փրկեցիր, վասնզի բոլոր մեղքերս կռնակիդ ետեւը նետեցիր: Քանզի գերեզմանը Քեզ չկրնար օրհնել... ապրողները, ապրողները Քեզ պիտի օրհնեն, ինչպէս ես այսօր կ'ընեմ:

Եսոյ. ԼԸ. 17-19

Ծնած եմ Գաղատիա (Էնկիւրի) 1879ին լուսաւորչական ծնողքէ: Շատ կանուխ հասակէս հայրս կորսնցուցի: Խեղճ մայրս ստիպուած՝ գիտ «Պաղտատարեան Արեւելեան Որբանոցը դրաւ, երբ ես դեռ հազիւ 8 տարեկան էի: Այդ տաքուկ յարկին մէջ բաւական երկար ատեն Աստուծոյ նախախնամութեամբ բարերարութեցայ: Հոն հացի եւ դպրոցի հետ Աստուծոյ խօսքին ալ առատութիւնը կը տրուէր: Բայց միտքս եւ սիրտս հոգեւոր բաներու հանդէպ բոլորովին գոց էին: Տէր Յիսուս շատ ճշգրտութեամբ նկարագրած է այդ հոգեկան տխուր վիճակս Մատ. Ժ. 13-ի մէջ ըսելով «Այս ժողովուրդին սիրաւ թանձրացաւ, եւ իրենց ականջներովը ծանր լսեցին ու աչքերնին զոցեցին սրպէսգի չըլլայ թէ բնաւ աչքերով տեսնեն եւ ականջներով լսեն եւ սրտով իմանան եւ դարձի գան եւ ես զանոնք բժշկեմ»:

Ժամանակ մը վերջ ուսուցչութեամբ սկսալ զբաղիլ: Հակառակ ինքնապահ եւ բարեւաւ վիճակիս, դարձեալ ուրախութենէ եւ խաղաղութենէ զուրկ էր հոգիս:

1898ին բողոքական երիտասարդի մը հետ ամուսնացայ: Բարձր նկարագրի տէր թէեւ, բայց զժբաղդաբար ան ալ ինծի պէս պաղ եւ անտարբեր էր հոգեւոր խնդիրներու շուրջ: Ո՛րքան տըխուր էր մեր ընտանեկան յարկը: Հոն ոչ երգ կար ոչ ալ աղօթք. հարկաւ Աստուծոյ քաղցր եւ սփոփարար ներկայութիւնն ալ բացակայ էր անկէ: Մինչդեռ հաւատացելոց տուններուն համար Սաղմոսերգուն կը գրէ «Արդարներուն բնակարաններուն մէջ յնձութեան եւ փրկութեան ձայն կայ» Սաղ. ՃԺԸ. 13:

1920ին Սուրիա մեկնեցանք: Մէկ-երկու անգամ ներկայ գտնուեցայ տեղւոյս հոգեւոր հաւաքոյթներուն: Ժողովի մը մէջ տրուած «Վկայութիւններուն, մանաւանդ «Ես Աստուծոյ որդի եմ» ասացուածքէն այնքան սրդողեցայ որ մտադրեցի ալ հոգ երբեք ոտք չկոխել, եւ ինքզինքնին «փրկուած» կոչողներուն հետ ոեւէ յարաբերութիւն չընել:

Հոգեւորապէս այնքան խաւարամիտ էի որ այդ սիրելի եղբայրներն ու քոյրերը անմիտ եւ ամբարտաւան կը կարծէի: Մինչդեռ իրականին մէջ ես էի անմիտը եւ ամբարտաւանը որ մեղքի ու մահուան մէջ կը շարունակէի քաշել յիմարութեամբ եւ յամառութեամբ: Բայց գոհութիւն չօրը որ «իմ մեղքերուս համեմատ չըրաւ ինծի», հապա լուսոյ մէջ բնակողներուն վիճակին մասնակից ըլլաւ գիտ: Փառք Անոր: Ու հիմա Յովհ. Գ. 7-ի «վերստին ծննդեան» օրհնեալ փորձառութենէն անցած ըլլալով՝ ամենուն կրնամ վկայել թէ «Ես ալ Աստուծոյ որդի եմ», վասնզի «ոչ արիւնէ, ոչ մարմինի կամքէ, ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծոյ ծնալ»: Ալէլուիա. Յովհ. Ա. 12-13.

Չորս տարի Պէյրութ մնալէ վերջ (ամուսինս տրդէն մեռած ըլլալով) փեսայիս եւ աղջկանս հետ Ֆրանսա մեկնեցանք: Կը ցաւիմ ըսելու թէ Մարսիլիոյ մէջ հակասութեամբ կան եւ կործանարար բազմութիւ գրքեր եւ զրգոյկներ ցրուել եւ թաղակիցներուս. Կը հաւատամ որ Տէրը բոլոր անօրէնութիւններուս հետ այդ մեղքն ալ ինծի ներած է Ա. Յովհ. Ա. 7:

Ժամանակ մը վերջ պարագաներու ստիպումով Լա Սիօթա փոխադրուեցանք 1932ին: Հոս էր որ «մէկ մեղաւորի մեռնիլը չուզող» Տէրը գիտ փրկութեան առաջնորդեց:

Հոս հասնելուս պէս, արդէն բողոքականաց շուրջ շատ բաներ սկսայ լսել: Բայց մասնաւորապէս 1922ին էր որ ուշադրութիւն գրաւող աղմուկ մը տարածուեցաւ ժողովուրդին մէջ թէ «բողոքականաց ժողովարանին մէջ տարօրինակ ժողովներ տեղի կ'ունենան. լուսաւորչականներ եւ կաթոլիկներ կրօնափոխ կ'ըլլան. հոգիներ կ'ապաշխարեն...»: Այս լուրը խուլ ատելութեամբ լեցուց հոգեւոր խնդիրներու թշնամի բոլոր տարրերը: Շատ չանցած կազմակերպուեցան ասոնք, տեղ վարձեցին, քահանայ եւ ուսուցչուհի կանչուեցան եւ յայտնի ու զաղտնի ամէն միջոց գործածեցին քաղաքիս մէջ ծայր տուած հոգեւոր արթնութեան յառաջխաղացումը խափանելու համար:

Քահանային տոաջին ժողովին մեծ բազմութիւն հաւաքուած էր: Եւ ալ գացի եւ զարմանքով հոգեւոր կոչուողներէն ալ քանի մը հոգի հոն աեսայ: Դուրս ելլելուս՝ ինձմով հետաքրքրուող այդ հոգեւոր քոյրերէն մէկուն ըսի, քահանային բոլոր խօսածները զիտէի արդէն»: «Լաւ, պատասխանեց քոյրը, եթէ փորձառար այդ բոլորը գիտես, հապա ինչո՞ւ չես վկայեր ուրիշներուն ալ. ճրագը չեն վառեր գրուանի տակ զնելու համար, հա՛ւա աշտանակի վրայ, որպէսզի շատերը լուսաւորուին»: Այս խօսքին վրայ սաստիկ սրտնեղած, բարկացայ քրոջը ու հեռացայ: Գիշերը շատ խղճահար եւ խոռված փեմակի մէջ մահիճ մտայ: Յաջորդ օրը բողոքականաց քարոզաժողովին գացի: Քարոզին ազդեցութիւնը աւելի ծանր նստաւ սրտիս վրայ: Ներքին խուլ պայքար մը ծայր տուաւ հոգիիս մէջ: Սկսայ տազնապի՛ր Փորձեցի հոգեւոր ամէն խորհուրդ ու մտմտութեամբ վանել մտքէս: Անկարելի եղաւ: «Մեղքի համար աշխարհը յանդիմանող» Ս. Հոգին կը գործէր ներսիդիս: Խիղճս ինձի գէմ կը բողոքէր եւ սիրտս խաղաղութիւն կը փնտռէր: Յաջորդ շաբթու 13 Հոկտ. 1933ին Ուրբաթ կէսօրէ վերջ Սիմգար քոյր Հազարեան ինձի այցելեց: Անկասկած Տէրը զրկեց զինք (Գործ. Թ. 11): Կարճ տեսակցութենէ մը վերջ, ստիպեց զիս որ իրեն հետ նոյն պահուն քոյրերու աղօթաժողովին երթամ, աւելցնելով թէ այսօր քարոզիչը պիտի նայի մեր ժողովին: Գացինք: Կարճ պատգամէ մը վերջ՝ ժամանակը աղօթքի, խոստովանութեան եւ վկայութեան յատկացուեցաւ: Մէկ երկու քոյրեր աղօթելէ վերջ՝ Սուրբ Հոգին զիս համոզեց եւ ղողացող ծունկերս զօրացուց: Ոտքի ելայ բժշկուած կողին պէս եւ Աստուծոյ ու Իր գաւազներուն առջեւ իմ մեղա-

ւոր ու կորսուած ըլլալու խոստովանելով Տէր Յիսուսի յանձնուեցայ: Օրհնեալ ըլլայ իմ Փրկիչս որ ոնէ մէկը չմերժեր և «Իրեն եկողը բնաւ զուրս չհաներ»: Նոյն վայրկեանին մեղաց թողութիւն եւ փրկութեան վստահութիւն ընդունեցի, նաեւ խաղաղութեան եւ շնորհակալութեան զգացումներով լեցուեցաւ խեղճ սիրտս ու ես սկսայ Տէրը օրհնել ու փառաւորել Իր գերագանց Շնորհքին համար:

Ըսել է, աւելի քան երկու տարի կ'ընէ որ փրկեալներուն պզտիկ հօտին խառնուած եմ: Այսօր այս վկայութիւնս կարգացող բոլոր հաւատացեալներուն եւ անապաշխարներուն կը վկայեմ կատարեալ անկեղծութեամբ թէ երբեք զղջացած չեմ Աստուծոյ յանձնուելուս համար: Մեծապէս կը տրտմիմ միայն որ կեանքիս 56 երկար տարիներէն 54ը մեղքի եւ մահուան գերութեան մէջ անցուցած եմ ի շահ Սատանային եւ իր դժոխային գործին, ի փնսս Տէր Յիսուսի եւ իմ անմահ հոգիիս: Ո՛հ, որքա՛ն վրսեմ, գեղեցիկ եւ պտղաբեր պիտի ըլլար կեանքս, եթէ ամբողջ պատանեկութիւնս եւ երիտասարդութիւնս Տէր Յիսուսի արիւնով մաքրուած եւ Ս. Հոգւոյն ձեռքով գործածուած ըլլար: Աւա՛ղ որ ես ալ շատ յաճախ ստիպուած եմ յուզումով երգել սա տողերը.—

Ո՛հ թէ Անցեալ մեղքի ժամերս

Յետս կոչե՛ կարենայի,

Ջանոնք ամբողջ Տէր Յիսուսի

Կ'ընէի կամքին գերի:

Բայց եթէ իրաւ վերջալուսերն ալ իրենց մասնայատուկ գեղեցկութիւնն ու գրաւչութիւնը ունին, կորսուած անցեալի մը վրայ կսկծացող իմ սիրտս ալ սա բարձրագոյն միտիթարութիւնը կրնայ ունենալ թէ այս ձերութեանս մէջ ալ կրնամ փայլել սրբութիւնով: Գուցէ վերջին ճառաքայլներովս քանի մը անմահ հոգիներ Փրկչին առաջնորդեմ:

«Քանի որ ցորեկ է», բոլորանուէր ուժերով աշխատեցէք ով իմ սիրելի երիտասարդ եղբայրներս եւ քոյրերս, քանզի «գիշերը կուգայ ուր մէկը չկրնար գործել», Ինչո՞ւ օր մը ձեր վատնուած ժամանակին վրայ ողբաք: Եւ եթէ իրաւ «տարին օրուան պէս կը թռչի, բոպէն թեւ ունի չկենար», ուրեմն կը վայելէ ձեզի «հոգիով բորբոքել ու Տէրջը ծառայել», որպէսզի երբ Անիկա յայտնուի, դուք չամչնաք, ալ ցնծութեամբ զայն զիմաւորէք «ձեր ցորենի խուրձերը բերելով», Իրեն:

Կը մնայ ըսել թէ հակառակ ծերութեանս եւ ընտանեկան ծանր զրազումներուս, ջանքս է միշտ ժամանակ գտնել ու ինծի տարեկից եւ զինուորակից Աննա քոյր թուրքիկեանին հետ տուները այցելել: Այսպէս Աստուծոյ խօսքը եւ մեր պարզ վկայութիւնը կը տանինք անմահ հոգիներուն, մասնաւորապէս հիւանդներուն եւ գանոնք քաղցրութեամբ ապաշխարութեան եւ փրկութեան կը հրաւիրենք: Տէրը հաւատարիմ է մեր այս տկար ջանքերն ալ օրհնելու եւ պտղաբերելու իր փառքին համար:

Խոստացած եմ Փրկչիս, իր շնորհքովը հաստատուն կենալ այս օրհնեալ կեանքին մէջ, նաեւ հաւատարիմ ու ժրջան ըլլալ իր ծառայութեանը մէջ՝ մինչեւ որ ինք գալ:

«Ամէն, եկուր, Տէր Յիսուս»,

Տէրոջմով ձեր քոյրը

ՍՐԲՈՒՀԻ ՊԷՅԼԷՐԵԱՆ

Լա Սիօթա

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

“ՈՎ ՈՐ ԱԿԱՆՋ ՈՒՆԻ ԹՈՂ ԼՍԷ,,

ՈՎ Երուսաղէմ՝ ԽՐԱՏՈՒԷ, չըււայ որ իմ
Հոգիս քեզմէ զատուի: Երեմ. 2. 8

ԽՐԱՏԸ մերժողը իր հոգին կ'անորգէ:

Առաք. ԺԵ. 32

Այս տարի ամառը, Փօնտ Օպէնասէն քոյր մը եկաւ Լա Սիօթա կազդուրուելու համար: Կիրակնօրեայ դպրոցին պատիկներէն՝ Միսաք անունով 5 տարեկան տղեկ մը մասնաւոր մաերմութեամբ մը կապուած էր այդ քրոջը: Օր մը, մինչ ան փողոցէ մը կ'անցնէր տուն մտնելու համար, սա ետեւէն վազելով կը բռնէ քոյրը եւ շատ լըջութեամբ կ'ըսէ «Մօրաքոյր, ես կ'ուզեմ ապաշխարել»:

— Ի՞նչ ըսել է ապաշխարել, կը հարցնէ քոյրը Միսաքին:

— Սիրտս Յիսուսին կուսամ, կը բացատրէ պատիկը:

— Ինչո՞ւ կ'ուզես ապաշխարել, կ'աւելցնէ քոյրը:

— Որ երկինք երթամ, որ երբ մեռնիմ, Յիսուս Պապային քով ապրիմ, մօրաքոյր:

Պատիկին խնդրանքին վրայ, երկուքը միասին անել փողոցի մը անկիւնը մտած ձեռնծալ եւ աչխուփ կ'աղօթե՛ն...

Սիրելի ԱՆԱՊԱՇԽԱՐ ընթերցող, չե՞ս հիշար այս պատիկին ՀԱԻԱՏԲԻՆ, ՅՈՅՍԻՆ եւ ա. կնկալուեալները վրայ: Զե՞ս զգացուիք, ի՞նչ համոզում ունիս գերեզմանէն վերջ երկարող ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ վրայ: Միսաքին պէս կը հաւատաս չՈՐԻՆԻՆ անմահութեանը եւ ՄԵՌՆԵԼԷԻ ՎԵՐՋ՝ ԱՊՐԵԼՈՒ յոյսը ունի՞ս: Կամ հետաքրքրուած ես արդեօք թէ «Ո՛ւր պիտի անցնես յախտեանականութիւնդ, ԵՐԿԻՆՔ թէ ԴԺՈՒԽԻ, Ու դեռ, ներքէ ինծի, քու անմահ հոգիդ սիրոյն համար հարցում մըն ալ ընեմ, — Երբեք փափաքած ես ԱՊԱՇԽԱՐԵԼ, ըսել կ'ուզեմ Միսաքին պէս ՍԻՐՏԻ ՅԻՍՈՒՍ ՓՐԿՉԻՆ ՏԱԼ: Կամ գէթ, երկինք երթալու եւ քեզի համար մեռնող Տէր Յիսուսը տեսնելու երբեք խորհուրդը եւ փափաքը արթնցած չէ՞ սրտիդ մէջ:

Օ՛հ, կը հիշնամ իրապէս Միսաքին վրայ: Այդ մանուկ հոգին «ՄԵՌՆԵԼԷ ՎԵՐՋ ԱՊՐԵԼՈՒ» բարձրագոյն համոզումը ունի: ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆզԱՊԱՐԸ անշնչելիօրէն դրօշմուած կ'երեւի իր սրտին վրայ: Երկինք երթալու ՓԱՌԱԽՈՐ ՅՈՅՍԸ զինք կը բռնկեցնէ: Բայց նայեցէք ո՞վ սիրելի ընթերցողներ, հիացէք, ամչցէք, այս պատիկի, ՍԷՐԸ այնքան մեծ է Յիսուսի վրայ, եւ Անոր հետ ապրելու փափաքը այնքան զօրաւոր՝ որ կ'ուզէ ԱՆՄԻՋԱՊԷՍ, առանց յապաղումի ապաշխարել, այն ալ փողոցի մը անկիւնին մէջ:

Ուսկի՞ց ունի այս պատիկը ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԱՅՍ ԳԵՐԱՋԱՆՑ գիտութիւնը: Ո՞վ ներշնչեց անոր ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ բարձրագոյն խորհուրդը: Ո՞վ յայտնեց անոր ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ եւ ՓՐԿՈՒԹԵԱՆ ամենաթանկագին ԳԱՂՏՆԻՔԸ: Ո՞վ զրաւ անոր մատաղ հոգիին մէջ Տէր Յիսուսը սիրելու եւ Անոր հետ ապրելու անդիմադրելի փափաքը: Ահա պատասխանը. — «Երանի՛ քեզ... վառնգի ԱՐԻԻՆԸ եւ ՄԱՐՄԻՆԸ չյայտնեց քեզի ասիկա, հապա իմ Հայրս որ երկինքն է»: Ասոր համար Տէր Յիսուս կ'աւելցնէ, «Ենթահակալ եմ Քեզմէ Հայր, Տէր երկնի եւ երկրի, որ ԱՅՍ ԲԱՆԵՐԸ ծածուկ պահեցիր ԻՄԱՏՈՒՆԵՐԷՆ եւ ԳԻՏՈՒՆԵՐԷՆ ու ՏՂՈՅ յայտնեցիր...» Մատթ. ԺՁ. 17 եւ ԺՍ. 25:

Ով որ ականջ ունի թող լսէ, «Ապաշխարել կ'ուզեմ, մօրաքոյր, որ երկինք երթամ, որ երբ մենք Յիսուս Պապային քով ապրեմ»:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօթա

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՅՈՒՆՎ. 5.—

ՄՕՐ ՄԸ ԵՐԳԸ

Դաս Դուկ. Ա. 46.58

Այս երգը փոխանակ իր որդիովը ուրախացող մօր մը երգը կոչելու՝ կարելի է կոչել մեղաւորի մը երգը որ իր Փրկիչը կը փառաբանէ: Մարիամ ինքզինքը հօս երջանիկ ենթական եւ առարկան կը նկատէ Աստուծոյ: Ինքը չէ որ արժէք մը ունի, ինքը չէ որ Աստուծոյ բան մը կուտայ, հապա Աստուած է աղբիւրը, հեղինակը եւ պատճառը բոլոր այն օրհնութեանց որոնց երանելի խողովակը կ'ըլլայ Մարիամ: Նա խոնարհութեամբ «իւր անձը մաքրած էր, սրբուած ու ի՛նչ Տէրոջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած» եւ Տէրը զայն զօրծածեց իբր «պատուական անօթ մը» (Բ. Տիմ. Բ. 21):

Մեծութիւն, ուրախութեան աղբիւր, Աստուածութիւն, հօգօրութիւն, հրաշագործութիւն, սրբութիւն, ողորմութիւն, զօրութիւն ամենակարողութիւն, արդարութիւն, օգնութիւն, յաւիտենական հաւատարմութիւն, ամէնը, ամէնը Աստուծոյ վերազրուած են այս երգին մէջ: Մարիամի բաժինը միայն ենթակայական, կրաւորական, արարածի բաժին է. Տէրը մեծցնել, փրկուիլ եւ ուրախանալ Փրկիչ (Յիսուս) Աստուծով, խոնարհութիւն, ծառայութիւն (աղախին), պզտիկութիւն, Տէրոջմէ վախնալ, հաւատալ (հ. 45) Մարիամի բաժինն էր: Նա ճշմարտապէս «Աբրահամի աղջիկ» էր (հ. 55):

Շատ սխալ բան է Մարիամը մեծցնել: Մարիամ ինքը կ'ըսէ «Իմ անձս կը մեծցնէ Տէրը» (հ. 46): Մեր միակ ընելիքն է Մարիամի երանի տալով՝ մէկտեղ՝ անոր խոնարհութենէն օրինակ առնել: «Ահա ես Տէրոջը աղախինն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի» (հ. 58): Մարիամ իր

կատարեալ հնազանդութեամբն, հաւատքովն ու անձնութեամբը ճամբայ բացաւ Յիսուսի՝ տապալելու մեղքին տնէնքը որ ուրիշ կնոջ մը անհնազանդութեամբն ու անհաւատարմութեամբը՝ համայն մարդկութեան վրայ բերուած էր:

ՅՈՒՆՎ. 12.—

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՏԵՍԻԼՔ ՄԸ

Ոչ թէ միայն Սիմէօն ծերունիին կեանքը եւ վկայութիւնը, հապա կարելի է ըսել թէ Յիսուսի ծննդեան եւ մանկութեան հետ առնչութիւն ունեցող բոլոր ղէպերէն ալ (նաեւ Աւետումը, Յովսէփի երազը, մոգերուն այցելութիւնը) մարգարէական տեսութիւններ կը յայտնեն. տեսութիւններ որոնք ղեռ մասամբ տառապէս (նաեւ մարմնաւորապէս այս աշխարհի մարդկութեան համար) չեն կատարուած:

«Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Դաւիթի աթոռը», (Դուկ. Ա. 32):

«Անոր անունը էմմանուէլ պիտի կոչուի, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ», (Մատթ. Ա. 23):

«Ո՛ւր տեղ է Ան որ հրեաներուն Թաւաւոր ծնաւ», (Մատթ. Բ. 2, Յովհ. ԺԲ. 19-22):

«...Երկրի վրայ խաղաղութիւն, մաքրոց մէջ հաճութիւն», (Դուկ. Բ. 14):

«...Եւ փառք քու Իսրայէլ ժողովուրդիդ», (Դուկ. Բ. 32):

«2էի՞ք պիտե՞ր թէ ինծի պէտք է որ իմ հօրս տունը ըլլամ», (Դուկ. Բ. 49):

Բոլոր ասոնք եւ ասոնց նման յայտարարութիւններ ղեռ միայն մասամբ կամ հոգեոր իմաստով կատարուեցին: Անոնց կատարեալ զօրծողութիւնը տեղի պիտի ունենայ հազարամեային:

Ներկայիս քրիստոնեայ եկեղեցին տեղը կը բռնէ Քրիստոսի ծննդեան նախորդող հրեայ տեսութեան: Այս տեսակէտով քրիստոնեայ եկեղեցին նոյն վտանգին տակ է հոգեւորապէս ուր որ հրեայ ազգն էր. այսինքն, հրեաներուն մեծամասնութիւնը թէեւ կը հաւատային ու կը սպասէին փրկութեան՝ բայց Աստուծոյ խօսքը մարդկայնացուցած, ազգայնացուցած եւ մտաւորականացուցած էին: Միայն անոնք որոնք Սուրբ Հոգիէն ազդարարուած էին՝ կրցան հասկնալ, սպասել եւ ընդունիլ Մեսիան Աստուծոյ զրկած կերպովը. այսինքն չարչարուող Մեսիան: Բաղդատէ Սիմէօն ծերունիին տեսութիւնը այս կէտին վրայ, Դուկ. Բ. 35, «Բո՛ւ սրտէդ ալ թուր մը պիտի անցնի», եւ ընդհանրացած հրեայ տեսութիւնը՝ որմէ զերծ չէին նախ նոյնիսկ Յիսուսի

աշակերտները: Պետրոս կամ Յակոբոս եւ Յովհաննէս եւ կամ բոլոր աշակերտները ազգային այս տեսութեան թարգմանը կ'ըլլան հետեւեւիին նման խօսքերով.—

«Քաւ լիցի Քեզ Տէր, այդ բանը քեզի չըլլայ» Մատթ. ԺԶ. 22, բարդ. նաեւ ԻԶ. 51):

«Շնորհէ մեզի որ նստինք մէկը աջ կողմդ...» (Մարկ. Ժ. 37):

«Տէր, Իսրայէլի թագաւորութիւնը այս ժառանգին մէջ...» (Գ. Առաք. Ա. 6):

Ներկայիս արդիական կոչուած եւ անարժանաբար քրիստոնէայ անունը կրող շատ մը եկեղեցիներու տեսութիւնն ալ այս չէ՝ միթէ: Երբ անոնք կ'ազօթեն ըսելով «Քու թագաւորութիւնդ գայ», իրենց սրտին կամ աւելի շիտակը ուղեղին մէջ կը հաւատան թէ այս թագաւորութիւնը պիտի գայ կամ գալու վրայ է քրիստոնէայ եկեղեցիին ջանքերովը եւ մարդկութեան օրէ օր քաղաքակրթութիւնովը: Այս քրիստոնէաներուն մօտ Քրիստոսի երկրորդ անգամ մարմնով մօտաւորութեամբ յաւանդել զրեթէ յիմարութիւն կը համարուի:

Երանի՜ անոնց, որոնք Սիմէօն ծերունիին նման Ս. Հոգիէն կը սուրբին Աստուծոյ կերպը Անոր ծրագիրներուն ու թագաւորութեանը վերաբերմամբ:

«Մարգարէութիւնները մի արհամարհէք», Ա. Թեա. Ե. 20:

«Մարգարէական խօսքն ալ ունինք որպէս Բէմութ տեղը լոյս տուող ճրագի մը», Բ. Պետ. Ա. 19:

«Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է» Յայտ. ԺԹ. 10:

«Երկինքէն Փրկչին կը սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի», Փիլ. Գ. 20:

«Այո, շուտով կուգամ ես: ամէն, եկուր Տէր Յիսուս», Յայտ. ԻԲ. 20:

ՅՈՒՆՎ. 19.—

ՅԻՍՈՒՍ ԻՐ ԳՈՐԾԻՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ Դաս Ղուկ. Գ. 24, 22: Դ. 1-13:

Մեր Տէրոջ մկրտուելուն իբր պատճառներ տրուած մեկնութիւններէն վեր՝ Տէր Յիսուս Իս. քն կուտայ ճիշդ մեկնութիւնը երբ կ'ըսէ, «Այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արարութիւնը կատարենք» (Մատթ. Գ. 15):

Այսպէսով Նա բոլորովին նոյն ուղղութեամբ կ'ընթանայ, որով պարտ էր ընթանալ Հին Կառկարանին մէջ Յիսուսի օրինակը եղող քահանա-

յապետը, Աստուծոյ եւ մարդոց միջեւ իր բարեխօսական եւ միջնորդական պաշտօնին սկսելէն առաջ: Տես Ղեւ. Ը.: Ահարոնի նախնուր երեք որոշ արարողութիւններէ կը բաղկանար (1) Մկրտութիւն (Ղեւ. Ը. 8), հող Եօթանասնից թարգմանութեան մէջ լուացումներու համար մկրտութիւն բառը գործածուած է. տես նաեւ Երբ. Թ. 10: (2) Ասկէ անմիջապէս ետքը կուգար օծումը (Ղեւ. Ը. 12) եւ (3) կը վերջանար «Զոհ»ով (Ղեւ. Ը. 14-30):

Այսպէս ալ Յիսուս, մեր Մեծ Քահանայապետը Աստուծոյ աջ կողմը կենալով իր բարեխօսական եւ միջնորդական պաշտօնին սկսելէ առաջ նախ (1) մկրտուեցաւ, ու երբ ջուրէն դուրս ելաւ (2) Սուրբ Հոգիով օծուեցաւ (Մատթ. Գ. 16 17, Ղուկ. Գ. 21, 22) (թէեւ արդէն իր ծնունդը Ս. Հոգիէն էր): Ընդէն է թէ Յիսուսի ողջակիզութիւնը միայն իր երկրաւոր պաշտօնէութեան վախճանին կատարուեցաւ, բայց արդէն իր բարեխօսական եւ միջնորդական գործն ալ իր յարութեանէն եւ համբարձումէն յետոյ սկսաւ, այսպէսով մեզի համար կատարելապէս «Յաւիտենական Քահանայապետ կարգուած ըլլալով»: Տես. Երբ. Է. 25-28:

Այս տեսակէտով մկրտութիւնը մեր Տէրոջ նուիրումին սկզբնաւորութիւնն էր, օծումը՝ շարունակութիւնը եւ խաչին զոհը՝ կատարումը:

Ղուկաս Աւետարանիչ կ'ըսէ թէ «Յիսուս ալ մկրտուելով աղօթք կ'ընէր: Անշուշտ մեր մկրտութիւններն ալ — ջուրին մէջ թաղուելով Յիսուսի հետ Անոր մահուանը թաղումին անկակից եւ ջուրէն ելլելով Անոր յարութեանը կցորդ ըլլալով» (Հով. Զ. 4, 5) — մեր մկրտութիւններն ալ պարտին թեթեւօ էն չըլլալ՝ հապա շատ աւելի ըլլալով:

Անապատին մէջ Յիսուսի փորձութիւնը հրաշալի եւ քաջալերական դէմք մըն է, որմէ ամէն հաւատացեալ պարտի սուրբիլ «Սատանայի խորհուրդները զիտնալ որ չըլլայ թէ անկէ զրկանք մը կրէ» (Բ. Կոր. Բ. 11): «Եթէ Աստուծոյ որդին ես»: Յայտնի է թէ Յիսուսը փորձողը նոյն հին օձն է «Իրաւ Աստուած ըսաւ»: Եւայի մօտ հարցական նշանով մը կասկած կը ցանէ Աստուծոյ խօսքին հանդէպ. եւ Յիսուսի մօտ «Եթէ» բառով կ'ուզէ կասկած արթնցնել Անոր Աստուծոյ Որդին ըլլալուն մասին:

Յիսուս յաղթեց երեք փորձութեանց ալ (փորձութիւնը նախ 40 օր տեւեց. Ղուկ. Դ. 2) Աստուծոյ խօսքովը, Հոգիին սուրբովը պատերազմելով: Երկրորդ փորձութեան մէջ Սատանային ը-

սածը բոլորովին ճշմարտութիւն չէ: Թէեւ իրաւ-
ցընէ աշխարհային իշխանութիւնը ու անոնց
փառքը անոր ձեռքն են՝ բայց միայն ժամանա-
կաւոր կերպով: Եւ այսպէս շատեր այդ փառքը
միայն այս աշխարհի մէջ վայելելով յաւիտեանա-
կան փառքը կը կորսնցնեն: Մինչդեռ հաւատաց-
եալը գիտէ թէ «Ինչ կը շահի մարդ մը եթէ բո-
լոր աշխարհը վատկի եւ իր անձը կորսնցնէ»
(Մատթ. ԺԶ. 26) եւ մնաց որ ճշմարտութեան
մէջ, «Տէրոջն է երկիր ու անոր լիութիւնը»
(Սաղ. ԻԴ. 4) եւ թէ «հեզերը պիտի ժառանգեն
երկիրը» (Սաղ. ԼԷ. 14):

Երրորդ փորձութեան Սատանան ինքն ալ Աս-
տուծոյ խօսքէն մէջըրերում մը կ'ընէ. բայց այն
ալ եղծելով: Նա կ'ըսէ «Գրուած է թէ իր հրեշ-
տակներուն պիտի ապսպրէ քեզի համար որ քեզ
պահեն» (Ղուկ. Դ. 10): Մինչդեռ այն Սաղմոսը
ուրկէ առնուած է այս խօսքը, կ'ըսէ, «որ քու
բոլոր Յամբաներուդ մէջ քեզ պահեն» (Սաղ. ՂԱ.
14) ինչ որ պիտի նշանակէր «քեզ պահեն նաեւ
երբ Սատանան քեզ փորձէ»: Ինչ որ նաեւ զար-
մանալիօրէն նշանակալից է, այն է թէ Սատա-
նայի մէջըրերած համարներուն անմիջապէս յա-
ջորդող համարը կ'ըսէ, «Առիւծի ու իժի վրայ
պիտի քալես, առիւծի կորիւնը ու վիշապը պի-
տի կոխուես» (Կ. 13 բաղդ. Ծննդ. Գ. 15): Այս-
պէս ալ ըրաւ Յիսուս անապատի փորձութենէն
սկսեալ մինչեւ խաչին վրայ Իր հոգին աւանդե-
լը: Աստուծոյ խօսքը Հոգիին սուրն է եւ ոչ թէ
Սասանային:

ՅՈՒՆՎ. 26.—

ՅԻՍՈՒՍ ԻՐ ՆՊԱՏԱԿԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Դաս Ղուկ. Դ. 16-30

Յովհ. Ա. 44ի «Իրեններուն եկաւ» խօսքը այս
դասին մէջ կ'իրականանայ: Ոչ թէ միայն իր
ազգին, հապա նախ իր մեծցած քաղաքին բնա-
կիչներուն: Նազարէթցիներուն մերժումը օրինա-
կաւոր էր ամբողջ հրեայ ազգին կողմէ ըլլալիք
մերժումին:

Հրաշալիօրէն նշանակալից է թէ հրեայ ժո-
ղովարաններուն մէջ այդ օրը կարգացուելիք
հատուածը Եսայ. «ԿԱ,ն էր: Մեր օրերուն հըր-
եայ տարեցոյցին մէջ այս գլուխը Զատկի մեծ
օրուան յատկացուած դասն է: Նկատի ունենալով
թէ հրեաները ամենամեծ զգուշութեամբ անփո-
փոխ կը պահեն հին աւանդութիւնները, կրնանք
ուրեմն հետեւցնել թէ Զատկի մեծ օրուան մէջ
էր որ Աստուծոյ Զատիկին, Աստուծոյ Գառը ըլ-
լալիք Որդին իր երկրի վրայ պաշտօնցնելիւնը

կը բանայ այս խօսքերով, «...Զիս զրկեց կոտ-
րած սիրտ ունեցողները բժշկելու... եւն...: Եւ ա-
սոր համար Իր սիրտը պարտ էր կորուրիլ, պատ-
ռուիլ խաչին վրայ, եւ ասկէ արիւն ու շուր վա-
զէր, քանզի «Անոր վէրքերովը մենք բժշկուե-
ցանք...»:

Երկրորդ եւ հրաշալիօրէն նշանակալից կէտ մ'ալ
սա է թէ, Յիսուս Դիրքը գոցեց այն կէտին վը-
րայ որմէ յետոյ Եսայ. ԿԱ. 2ը կ'ըսէ, «Ու մեր
Աստուծոյն վրէժխնդրութեան օրը հրատարակե-
լու...: Նա փրկելու եկած էր եւ ոչ թէ վրէժխնդ-
րութեան (Յովհ. Գ. 15-17): Նա կենդանի է այժմ
դեռ փրկելու (Երբ. Է. 25): Բայց կուգայ այն
օրը երբ «Տէրոջը ընդունելի տարին», շնորհքի
տարին անցած պիտի ըլլայ Այդ տարին եր-
կնցուած է, վասնզի Աստուած մեզի երկայնա-
միտ կ'ըլլայ, վասնզի չուզեր որ մէկը կորսուի
հապա որ ամէնքը ապաշխարանքի գան», (Բ.
Պետրոս Գ. 9):

Ղուկ. Դ. 22ը պէտք է հաւատացեալները դո-
ղալով կարդան: Վասնզի յաճախ հաւատացեալ
ներս հաճոյքով, զարմանքով, դժալուծով մտիկ
կ'ընենք եւ կը հիանանք քալողոյին արտաքին,
առողջանական, լեզուաբանական, ճարտասանա-
կան կարողութեանց վրայ եւ արուած պատգա-
մին հանդէպ ծանծաղ, հարեանցի դիրք մը կը
բռնենք: Անգամ մը ազուր քարոզէ մը յետոյ
անձ մը մօտեցաւ պատուելիին եւ ըսաւ անոր,
«Շնորհակալ եմ պատուելի, շատ աղուր քա-
րոզ մը տուիք այսօր...»:

— Ձեզմէ առաջ արդէն Սատանան այդ բա-
նը փսփսաց ականջիս երբ դեռ վերը բեմին վը-
րայ էի, պատասխանեց Աստուծոյ այս խոնարհ
ծառան:

«Խօսքը կատարողներ եղէք եւ ոչ թէ մի.
այն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով, (Յակ. Ա. 22)
Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

1936

— Մէ'կ, երկո՛ւ, երե'ք... Մայրիկ, ճիշդ երեք
օր մնացնոր տարուան համար, գոչեց Պետրոս
ուրախ-ուրախ, օրացոյցին վրայ մնացած վերջին
թերթիկները համբուլով:

— Այո տղաս, միայն 3 օր, ու 1935ը ա'լ յա-
ւիտեան չես տեսներ, պարտասխանեց մայրը: Երեք

օր վերջը պիտի սկսինք գրել 1936: Բայց գիտե՞ս թէ ի՞նչ կը նշանակէ նոր տարուան այդ թիւը:

Նոր տարուան թիւը, ո՞ր թիւը... Նոր տարին գիտեմ, Կաղանդն է, տարին մէկ անգամ կուգայ չէ՞, եւ նուէրներ տալու համար է: Ի՞նչ լաւ կ'ըլլար, մէկ տարուան մէջ 4-5 կաղանդ ըլլար, չէ՞ մայրիկ:

— Խելացի բաներ խօսէ, տղաս: Նոր տարին կուգայ երբոր հին տարին լմնայ: Բայց չե՞ս գիտեր թէ ի՞նչու 1935 կամ 1936 կ'ըսենք:

— Իրա՛ւ, ես ալ կ'ուզէի ատիկա քեզի հարցնել: Ինչո՞ւ հին տարի, նոր տարի կ'ըսենք, տարին կը հիննա՞յ, կը մաշի՞: Եւ ի՞նչու կը համբեր տարիները, 1935 հատ տարի՞ կայ եղեր:

Մայրը ձեռքի կարը վար դրաւ, ակնոցը հանեց աչքէն ու դառնալով աղուն՝

— Հիմա մտիկ ըրէ ուրեմն, ես կը կարծէի թէ գիտես: Տարիները ի՞նչու կը հիննան՝ ատիկա ուրիշ խնդիր է: Բայց 1935 գրելով ըսել կ'ուզենք թէ Յիսուս ասկէ 1935 տարի առաջ էր որ երկինքի մէջ Հօր Աստուծոյ քով Իր ունեցած փառքը թողուց, մանուկի մարմին առաւ ու այս աշխարհը գալով ծնաւ Բեթլեհէմի մսուրի մէջ, որպէսզի առանց մեղքի ապրի, մեծնայ, յետոյ մեղաւոր ժարգոց տեղը պատժուի ու խաչուի, ու այսպէս մեզ ազատէ Սասանայէն ու դժոխքէն:

— Հասկցա՞յ: Յիսուս ասկէ 1935 տարի առաջ ծնաւ, բայց մենք...

— Անոր ծննդեան տարեդարձը կը տօնենք ամէն տարի, ճիշդ ինչպէս որ, քու ծննդեանդ տարեդարձը կը տօնենք ու կը համբերք թէ դուն քանի տարի առաջ ծնար:

Մայրը լռեց, առաւ կարը իր ձեռքը, բայց քանի մը վայրկեան մտածկոտ կերպարանքէ մը յետոյ աւելցուց,

— Դուն կ'ուզես Պետրոսիկս, որ միշտ նոր տարի ըլլայ եւ կամ կաղանդը շուտ շուտ գայ, բայց գիտե՞ս արդեօք, թէ ամէն անգամ որ նոր տարի մը կ'անցնի, մեր կեանքին մէկ մասն է որ կ'երթայ ու մենք քիչ մը աւելի կը մօտենանք գերեզմանին: Սակայն ըսել չեմ ուզեր թէ...

— Ո՛հ, ուրեմն ես չեմ ուզեր որ հին տարին արագ անցնի, շուտ մը պիտի ծերանա՞մ: Զեմ փափաքիր գերեզմանին մօտենալ: Թող կաղանդը մէկ քանի տարին անգամ մը գայ:

Մայրը ծիծաղը չկրցաւ զսպել նախ, յետոյ լուրջ դէմք մը արձանելով պատասխանեց.

— Դուն կը նմանիս այն տղուն, որ նաուս մը մէջ նստած էր ճամբորդէ դէպի գեղեցիկ քաղաք մը, ուր իր սիրելի հայրը եւ բոլոր ազգականները

իրեն կը սպասեն եւ հակառակ որ հովը կը սուլէ, ալիքները կը զարնեն, իր կեանքը ամէն վայրկեան վտանգի մէջ է, ինք կ'ուզէ շարաթնեւոր մնալ ծովուն վրայ եւ չուզի շուտ նաւահանգիստն հասնիլ...

— ...

— Այո՛, գիտեմ, դուն ատանկ բան չըսիր: Բայց այս աշխարհի վրայ մեր անցուցած կեանքընալ ճամբորդութեան մը կը նմանի ճիշդ: Մենք միշտ հոս պիտի չմնանք, ուշ կամ կանուխ պիտի մեռնինք: Սակայն գիտես որ մեր երթալիք տեղը գերեզմանը չէ, մեր մարմինը միայն հոն կը դրուի: Մեր հոգին ուրիշ տեղ մը ունի երթալիք, եւ այդ տեղը երկինքն է, զրախտը, սիրելիս: Մենք հոն Հայր մը ունինք, Աստուծո՛ւ, որ մեզի կը սպասէ, ինչպէս նաեւ մեր սիրելի Փրկիչը Յիսուս: Ինք մեզմէ առաջ գնաց հոն, յարութիւն առաւ ու համբարձաւ, ու հոն մեզի համար տեղ պատրաստած է: Երբ հասնինք, հրեւշտակները մեզ դիմաւորելու պիտի գան...

Ի՞նչ լաւ է, ես կ'ուզեմ շուտ երթալ հոն: Ընկերս Գուրգէնն ալ պիտի կրնա՞յ գալ արդեօք:

— Անշուշտ, այն տեղը Աստուծո՛ւ ամենուն համար պատրաստած է, տղաս, միայն թէ ով որ հոն երթալ կ'ուզէ, պէտք է ինքզինքը բոլոր սրտով Անոր յանձնէ, Յիսուսի հաւատայ, Անոր աղօթէ որպէսզի սուրբ սիրտ մը ունենայ, քանզի բոլոր հաւատացողները եւ Անոր խօսքին հրեւշտակները հոն պիտի երթան եւ իրենց համար պատրաստուած յաւիտեանական կեանքը պիտի վայելեն: Հիմա վստահ եմ որ շուտ երթալ կ'ուզես այս Հայր աշխարհէն: Ուրեմն աղօթէ որ Յիսուս շուտ գայ ու մեզ Իր քով առնէ:

Յ. Ք.

1935

Երեք հարիւր վաթսուներ հինգ էջերով, Գիրք մ'անուծին մեկնեցաւ ան գիշերով. եւ կարծելով թէ ճերմակի մ'է բարի, Գրքը ջաջինք «Երթաս բարով Հին Տարի»:

Բայց չըգիտցանք թէ հիւր չէր ան՝ այլ Լրտես, Որ անվերջալ արագագիր դպրի պէս՝ Որձանագրեց խօսք, գործ խորհուրդ մեր կեանքին ու տարաւ գայն հաշուեպահանջ ստուանին:

Ս. Պ.

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՅՆ ՈՒ ԿԵՆԱՅ ՋՈՒՐԸ

Թարգ. Անգլ. Յ. Ն. Ղ.

Երանգով երգելու աշխուժ
Կու տես՝ ես կծծ. Դա քի հա ջի՛հ Կըմ. պետ կե. նաց չու. Ի՛նչ

Վե. վի՛շ Տէրն կը սե. Վի՛շ որ ան. կէ իւր. մի, Բը. յաւ թը նաւ պիտ

Վերջ p. Զը ծար ուի. Ինչ. Բնաւ պիտ չը ծար ուի. Ո՛չ. Բնաւ պիտ չը ծար ուի

P. f. D. S. Ինչ. Բնաւ պիտ չը ծար ուի. Ո՛չ. Բնաւ պիտ չը ծար ուի. Տէրն կը.

Կ'ուտեմ ես կենդանի հացէն,
Կ'ըմպեմ կենաց ջուրին վէմէն,
Տէրն կ'ըսէ, «Ով որ անկէ խըմէ,
Բրնաւ բրնաւ պիտ չը ծար ուի»:
Ի՛նչ, Բնաւ պիտ՝ չը ծար ուի,
Ո՛չ, Բնաւ պիտ՝ չը ծար ուի.
Տէրն կ'ըսէ, «Ով որ անկէ խըմէ,
Բրնաւ, բրնաւ պիտ՝ չը ծար ուի»:

Այս երգը երգելն ք ուրա-
խութեամբ եւ աշխուժիւ:

Նօթային վերջին զծին
վրայի D S նշանը կը ցու-
ցնէ թէ երբ մինչեւ հոն եր-
գենք, փնտոելու ենք ան-
միջապէս Բ. տողին վրայի
S. ք եւ շարունակելու ենք
անկէ մինչեւ հասնինք վեր-
ջը Գ. տողին վրայ:

P. ըսել է Piano, այս-
ինքն մեղմ. այդ տեղը մեղմ
երգելու է:

F, ըսել է Forte, այս-
ինքն զօրաւոր, այդ տեղը
զօրաւոր երգելու է:

Երբ աշակերտները լաւ
մը սորված են, կրկնեցողը
աւելի հետաքրքրական ը-
նելու համար հետեւեալ
կերպով կարելի է երգել. —

ա. Հարցումը կրնան
կարգին մէկ մասը երգել և
պատասխանը միւս մասը
տալ: Բ. Հարցումը մէկ հո-
գին կ'ընէ եւ պատասխանը
մնացեալները կուտան եւ
բոլորը միացած՝ «Տէրն կ'ը-
սէ ով որ անկէ խըմէ» տո-
ղին վրայ կը շարունակեն
մինչեւ վերջը: Եթէ մեծեր
են երգողը, (քանզի մեծե-
րու համար ալ շատ
հաճելի երգ մ'է այս) հար-
ցումը արանց կողմէ տեղի
կ'ունենայ, պատասխանը
կանանց կողմէ կը տրուի
կամ փոխադարձաբար:

Le Gérant : Mr. le PASTEUR KAL'ENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանամիջի աղօթածողուններու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse
8 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցոյս աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրմ, Ս. Միքր, Ալբ, Պոլ

Վար Օուո մանաւոր բնակարաններու մէջ

Շարանամիջի ժողովներ

Բ.շր. ժամը 2ին ՍԱՆՔ ԱՆՔՈՒԱՆ,

Դ.շր. ժամը 2ին Սէն ժուլիէն եւ Լէզ Օլիվ

Դ.շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե.շր. ժամը 20ին Սէն ժէրմ

Ռ.շր. ժամը 20ին Camp Victor Hugo

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loun

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնս.

16 ին քարոզածողով:

ՍԷՆՔ ՄԱՐԿԻՐԻՔ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅՈՒԱ.— Քարոզիչ' Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ.—Հովիւ' Վեր. Ա. Փափաղեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրաց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՅՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրաց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ. Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.—Հովիւ' Վեր. Ժ. Պարտաբեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՅՆ ՏՐ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔ ԷՔԻԷՆ.—Քարոզիչ Պատ. Ի. Աբրահամեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիսի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՅՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Moule Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՈՐՎԻԼ.— Քարոզիչ' Պր. Մ. Վէթիլեան

22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրաց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

Երկու կիր. անգամ մը 7.30ին երիւ. խառն ժողով

Rue des Brochets. Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Նոր տարուան առթիւ խմբագրութիւնս իր սրտագին մաղթանքները կը դրէ «Բանբեր»ի ընտանիքին մօտակայ եւ հեռակայ անդամոց Ելից ԼԴ. 10ով որ մեր օրացոյցի մօտքի համարն է:

Խմբագրութեան կողմէ

Փառք Տէրոջը, 1935ը փակեցինք զոհունակութեամբ. մեր կողմէն ջանքեր չխնայեցինք «Բանբեր»ը ժամանակին ձեզի հասցնելու: Ուրախ ենք որ գնահատութիւնները մեր խորհածէն աւելի եղած են եւ գնահատականամակները զմեզ կրկինս թարմացուցած են: Մեր ձեռքէն եկածը պիտի ընենք Բանբերը աւելի եւ աւելի մատչելի ընելու: Մեր խոստման համաձայն ձայնագրուած երգերն ալ սկսած ենք: Վեց հատը պզտիկներու եւ վեց հատն ալ մեծերու պիտի ըլլան: Տալիկան 12 հատ եթէ ինք կամի:

Այս տարուան պիտոճէն թէեւ լման դոցած չենք, բայց պիտի կրնանք գոցել, երբ դեռ անվճար բաժնեգիրները հասնին, ու յոյս ունինք որ անոնք շուտով պիտի դան:

Գալ տարուան համար մի մոռնաք նոր բաժանորդներ զրկելու կամ եթէ անկարողներու պիտի օգնէք, հիմակունէ մեզի տեղեկացուցէք:

Անոնք որ իրենց թերթը զադրեցնել կ'ուզեն, թող հաճին առաջին առթիւ իսկ մեզի գրել, կամ ետ դարձնել թերթը գրելով մերժուած է: Նաեւ զոհ պիտի ըլլայինք եթէ բաժնեգիրները կանխիկ զրկուին: Դրամի գոյութիւնը ամէն թիւի առթիւ շատ մը հոգերէ ազատ կը ձգէ զմեզ: Հարկ չկայ Աստուծոյ զաւակաց վրայ կրկին անտեղի հոգեր աւելցնել: Ասիկա սկզբունք ընենք մեզի:

Այօժքի խնդրանք

Մարտէյի եւ իր մօրող նահանգին մէջ գտնուած քաղաքներուն մէջ Հայ անդործներու թիւը բազմապատկուեցաւ տարուէ տարի: Այս տարի առենէն ստուարն է անոնց թիւը: 2500է աւելի անգործներ կան, ինչ որ 2500 ընտանիքի չքաւոր վիճակի մէջ ըլլալը կը նշանակէ: Նաեւ «Բանբեր»ի ընտանիքին անդամներէն շատերն ալ անգործութեան դատապարտուեցան: Հակառակ որ երկրիս միւս գաւառներուն մէջ կայ, թէեւ անբաւական՝ գէթ պզտիկ կառավարական օգնութիւն մը, բայց այդ օգնութիւնը նահանգիս կառավարութենէն կը զլացուի Հայերու, որոնք երթալով աւելի թշուառ վիճակի մը կ'ենթարկուին: Նոյնա՛յն իրենց փրանսայի մէջ բնակող եւ ֆրանսահայատակ գաւազները, որոնք իրաւունք ունենալու էին քաղաքապետարանէն օգնութիւն մը ընդունելու, բայց չեն ընդունիր, որովհետեւ օտարական ծնողք ունին:

Աղօթեցէք Մարտէյի անգործ ազգայիններուն եւ «Բանբեր»ի անգործ եղբայրներուն համար: Տագնապը իրաւ մե՛ծ է: